

ԺԱՆԱԳԻՆ
ԻՐԱԴԱՐԱՆ

№ 153 - 154

№ 153 - 154

Շ Ի Ր Վ Ա Ն Զ Ա Գ Ե

Տ Ա Ս Ն Հ Ի Ն Գ Տ Ա Ր Ի Ա Ն Ց

Պ Ա Տ Ա Վ Ա Ն Ի Ք

Ֆ Ա Թ Մ Ա Ն Յ Ե Վ Ա Ս Ա Դ Ը

ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՅՍՏԱՆԻ

Պ Ե Ը Ս Ե Ա Տ Հ Ր Ա Տ Ա Ր Ա Կ Չ Ո Ւ Թ Ց Ո Ւ Ն

Յեքուան, 1937

897.99

Շ-66

Մեր պես և վերադառնի,
ստեղ եզան ժամկետը ոչ ու
должна быть возвращена не
казанного здесь срока

Բնակիչի անունը _____

Выдач _____

6 NOV 2011

ՊԵՏՂՐԱՑԻ ԵԺԱՆՆԱԳԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ

№ 153-154

№ 153-154

Շ Ի Ր Վ Ա Ն Զ Ա Դ Ե

Ա Ս Ն Յ Ի Ն Գ Տ Ա Ր Ի Ա Ն Ց

Պ Ա Տ Մ Վ Ա Ն Կ

Ֆ Ա Թ Մ Ա Ն Յ Ե Վ Ա Ս Ա Դ Ը

153/154
153/154
153/154

ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ
ՅԵՐԿԱՆ, 1937

15.07.2013

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍՏՄԱՐԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ

ՏԱՄԱՆԻՑ ԿԱՐԻ ԱՆՑ

48387

— Դատավորները դալիս են...

Ամբոխը միահամուռ վոտքի կանգնեց,
խուլ շնջյուններն ընդհատվեցին ծայրե ի
ծայր լեքը դահլիճում թաղավորեց լուս-
թյուն:

Պահապան գինիորներն ավելի մոտիկացան
վանդակապատին, վորի յետևում կանգնած
եր ուրվա տխուր հերոսը: Նա դեռ պատանե-
կական հասակումն էր, բարակ, նորաբույս
ընչացքը հազիվ հազ ծածկում էր նրա ստորին
չուրթը. նա գեղեցիկ էր, թուխ աչքերով,
փոքրիկ ձեռներով և բավական նուրբ կապ-
մվածքով: Նրա յերեսի գծադրությունը չէր
արտահայտում յեղեռնագործի հոգի:

Առաջ ներս մտավ նախագահը, հետո



2985-2003

քննիչ անդամները, հետո դատախազը, հետո քարտուղարները: Նրանց դեմքերը սառն է յին, անտարբեր և, միևնույն ժամանակ, ահարկու հարյուրավոր ամբոխի համար:

Հանցավորն յուր հայացքն հառեց դեպի այն կողմ և մի րոպե չանցած լավեց նախագահի անհողդողդ ձայնը.

— Բազմի նահանգական դատարանի քրե-յական բաժինը Գրիգոր Խանգաղյանցին, մեղադրելով Սեյիդ-Աղիմի վորդի Ղուրբան Ալիի սպանության համար, դատապարտեց...

Հանցավորը մի ցնցումն դործեց. նրա ձեռների շղթան մի թեթև շաչյուն արծակեց: Ամբոխը, ինչպես մի անձնավորու-թյուն, դսպեց յուր շնչառությունը:

— Դատապարտեց՝ զրկել բոլոր անհա-տական և ստացական իրավունքներից, յեն-թարկել տաժանակիր աշխատանքի Տոմսկի նահանգի դատառններից մեկում տասն ու յեր-կու տարի ժամանակով, այնուհետև հավի-տենական բնակության միուսիայի հեռավոր նահանգներում:

Մինչ թարգմանն այս խոսքերը կրկնում էր հանցավորին, դահլիճի մի անկյունից լավեց կանացի մի սուր ձիչ:

Հանցավորը վոչինչ չպատասխանեց նա-խագահի հարցին, թե, արդյոք, դո՛հ և այդ վճռով: Պահապանները բաց արին վանդակա-պատը, և նա թուլացած, ապրդնած ցած իջավ սանդուղքով: Նրա դողդոջուն վոտը դահլիճի հատակին չհասած, կականելով ա-ռաջ վազեց և նրա պարանոցին փաթաթվեց ստիական հաղուստով մի կին:

Դա դատապարտվածի հարադատ մայրն էր, վոր յուր թևերի տակ դռվելով սնել ու մեծացրել էր նրան տասնութինը տարի, մինչև այն ժամանակ, յերբ վորդին բոլորովին անձնատուր յեղավ կյանքի մոլություններին: Յե՛վ յերկու տարի չանցած յերկրորդ տար-փածուն ձգեց նրան փորձության մեջ:

Վո՛չ ամբոխի խնդրքը, վոչ վոստիկան-ների խոսքը, վո՛չ ավինների սպառնալիքը չկարողացան մորը բաժանել յուր անդրանիկ վորդուց: Նա խղճալի յեր, բայց շատերն ա-

վելի խղճուամ էյին յերիտասարդ դատապարտ-
վածին: Ո՞վ չէր ճանաչում նրան N. քաղա-
քում, վո՞ր մայրը չէր նախանձել նրա մորը,
վո՞ր աղջիկը տասն անգամ չէր դիտել նրան
դռները յետևից, ասիական համեստության
և ամոթխածության թանձր քողի—չալի տա-
կից, յերբ սիրուն տղան անցնում էր փողո-
ցով, գլուխը բարձր պահած, գլահլը ան-
փույթ կերպով ձախ տկանջի կողմը թեքած,
կուրծքը դուրս ցցած, ճակատը բաց, դեմքը
հանդուգն, կրակոտ: Յե՛վ նա, շատերի նա-
խանձի ալք արարական, հանկարծ դո՛հ դար-
ձալ յուր մոլի կրքերին, մի անառակ կնոջ
վոտքի տակ դնելով ծնո՞ղների նամուսն և
յուր ծաղիկ կյանքը:

Յերբ Անթառամն ուշքի յեկավ, յուր
չուրջը կանգնած տեսավ միայն մերձավոր
աղբահաններին: Նա անզգայաբար թույլ
տվեց, վոր իրան կառք նստեցնեն և տանեն:
Նա կզնա դատավորների մոտ, կաղերսի, վոր
վճիռը փոխեն, յեթե չեղավ՝ նա վղիմի ավե-
լի բարձր դատավորներին: Նա մինչև անգամ

վոտարաց կզնա թագավոր կայսեր մոտ,
կրնկնի նրա վոտներին: Նա բարի յե, նա չի
թուլ տալ, վոր մի մայր զրկվի իր վոր-
դուց և այն էլ ինչ վորդուց...

— Տասներկու տարի, տասներկու տարի,
անխի՛ղճ մարդիկ...



Մարտ ամսի վերջն էր: Վոլգա գետի
ստորին մասերի օտուլյցն արդեն կոտրվել էր
և Բազվի ու Ռոսիայի մեջ նավազնացու-
թյունը սկսվել:

Յեղանակը լավեկան ցուրտ էր. մանր,
փոշիոնման անձրև էր դալիս, ծովը խաղաղ
էր, միայն նրա հեռավոր հորիզոնը ծածկված
էր մոխրագույն քառձր մշուշով: Փորձառու
մարդիկ հավաստեցնում էին, թե խորքում,
ափերից շատ հեռու փոթորիկ կա: Իսկ «կաս-
պի» շոգենավի հանդուգն նավապետն արհա-
մարհում էր թե՛ բնության սպառնալիքն և թե՛
մարդկանց խորհուրդները:

— Շտապեցե՛ք, — հրամայում էր նա ան-
վրդով ձայնով նավաստիներին, — կես ժամից
հետո պիտի խարխալը հանենք: Բոլոր ա-
պրանքները բարձիված են:

— Բարձիված են:

— Վորտե՞ղ են ճանապարհորդները:

Նավապետը վերջին բառն արտասանեց
հեղնական յեղանակով:

— Ահա՛...

Նավահանգստի ծայրում հավաքված էր
միատեսակ մոխրագույն կապույտ վերարկու-
ներ հազած արտորականների խումբը, թվով
սոսը հոգի, չընկալապատիվ կրկնապատիկ
զինվորներով: Հացի կապոցները ձեռներին
բռնած, թշվառները մուսյլ ու խոշոր հայաց-
քով նայում էին ջրի անհուն տարածությա-
նը, վոր այն որվանից առ միշտ պիտի ան-
ջատեր նրանց հայրենիքից: Նրանք բոլորն
ոտար քաղաքներից էին բերված: Չկար մե-
կը, վոր արտասուքով կամ դեթ ցավակցա-
կան հառաչանքներով ճանապարհ դներ
նրանց: Ո՛վ գիտե, նահանգի վո՛ր դավառում

և վո՛ր դյուղումն էյին այդ բոպեյին վողբում
նրանց մայրերն ու ջուրերը: Մտածում էյին
նրանք այդ մասին, թե վոչ—աստծուն էր
հայտնի: Յերբեմն նրանց տիրում էր մի կա-
տաղի զվարճութուն: Նրանք միմյանց հրում
էյին, կատակներ էյին անում, հըռհըռ ծի-
ծաղում էյին: Կարծես, առաջիկա ճանապար-
հորդութունը մի զվարճալի զբոսանք էր
խոստանում նրանց: Բոլորն էլ ալազակներ
էյին, ո՛վ գիտե, քանի անմեղների արյունի
մեջ թաթախած իրանց ձեռները:

Միայն մեկն էր քացառություն ներկա-
յացնում այդ արտորականների մեջ յուր հո-
գեկան դրությամբ: Նա կանգնած էր խմբից
մի փոքր հեռու, ամենից տեսքով և ամենից
յերիտասարդ: Ձինվորների շրթապակաս շար-
քի յետևում կանգնած էր նրա մայրն յուր
մի քանի ազգականների հետ:

Յերբ յուր բոլոր հույսերից զրկվեց,
տեսնելով, վոր աղի աղերասնքներն վոչ վո-
քի վրա չադգեցին, Անթառամին մնում էր
հաշտվել յուր վիճակի հետ: Յերեք ամիս

չանցած Գրիգորին դուրս բերեցին յուր ծնընդ-
յան քաղաքից: Անթառամը հետևեց նրան
մինչև Բաղու: Յեվ ահա վերջին անգամն
եր նա տեսնում յուր վորդուն:

Գրիգորն աշխատում եր յերևալ ուրախ,
զվարթ և ճիգն եր թափում մխիթարել յուր
մորը: Բայց նրա ամեն մի մխիթարական
խոսքը կրկնապատկում եր Անթառամի տան-
ջանքը:

Կուրծքը կխտով չափ բաց, աչքերը ար-
տասուքից ցամաքած, նա յուր հոգեկան վիշտն
արտահայտում եր միայն գլխի տարրերինսկ
չարժումներով: Յեվ այդ շարժումներն ավելի
աղբու եյին, քան առաջվա արտասուքը, հե-
կեկանքն ու դողումները: Նա ձգտում եր ա-
ռաջ, ուզում եր մի անգամ ևս փաթաթվել
յուր սիրեցյալի պարանոցին: Բայց բավական
ե, զինչորական կարգապահությունը արտի
թույլ գեղումներ չի սիրում:

Սվինների սպառնալից շարքը մի անխոր-
տակելի պատնեչ ե մոր և վորդու միջև: Յեվ
վորքան գեղեցիկ եր նա այն որն յուր մոր

աչքում, նույնիսկ աքսորականների տղեղ հա-
զուստով, մի տարվա հոգեկան և մարմնա-
կան զրկանքներից հետո:

Շողենավի սուլիչի առածդական ձայնը
լսվեց: Անթառամի աչքերը մթնեցին: Աքսո-
րականներին հրամայեցին առաջ գնալ, և
մոխրադուլն խումբն անցավ շողենավի տախ-
տակամածի վրա:

Բարակ անձրեւը շարունակվում եր: Ի՞նչ,
նա, վոր մեծացել ե ծնողների խնամող հար-
կի տակ, դեչերը պիտի անցուցանի բա՞ց
ողում, ծովի անհուն տարածությա՞ն մեջ,
անձրեւի՞ ներքո: Վոչ յերբեք, թողե՛ք Անթա-
ռամին ծովը դցի իրան, խեղդվի, վոր չտես-
նի վորդուն այդ դրության հասած: Բայց ո՞վ
կթողնի և ինչո՞ւ. չե՞ վոր ասածու ձեռին
վոչինչ անհնարին չկա և միթե չի՞ կարող
նա աղատել Անթառամի վորդուն:

Իսկ շողենավը մեղմիկ սահում եր և նա-
վահանդատից հեռանում: Անջատող պատնեչն
այժմ ծովի խորությունն եր, այսինքն ինքը
բնությունը:

Յեւլ վո'րքան արագ եր մեծանում այդ պատենչը :

Ահա խարխիսը բարձրացալ ծովի հատակից, շողենալն յուր կտուցը ծոեց դեպի հակառակ կողմը. աքսորականների մոխրազուլն գլխարկներն են միայն յերևում : Մի կարմրադուն լաթի կտոր այդ գլխարկներից վեր սավառնում է ադի մեջ : Դա Գրիգորի վերջին բարենն է :

Չքացալ կարմիր թաշկինակն ևս, և ամեն ինչ ձուլվեց, դարձալ մի անորոշ սև դունդ, վորից բարձրանում էր թանձր նավթային ծուխն և սփռվում մուգ կապտադուն ծովի տատանվող մակերևույթի վրա...



Անցան առաջին ամիսները : Անթառամն արդեն վերադարձել էր յուր ծննդյան քաղաքը, այնտեղ, ուր հանցանք էր գործել և ուր դատապարտվել էր հավիտենական աքսորանքի նրա վորդին :

Որ-որի վրա նա սպասում էր նամակի :

Առաջին նամակը ստացալ միայն լինն ամիս անցած :

Գրիգորը նկարագրում էր նախ ծովային վտանգալից փոթորիկը, բացողյա կյանքը, հետո ընդարձակ Ռուսիայի լայնատարած դաշտերը, ցուրտը, անձրևները, ձյունը, բուքը, բնության և մարդկության արհավիրքը, վոր կրել էր նա յուր հնգամսյա ճանապարհորդության ընթացքում : Վերջապես, նրանց բերել են աքսորատեղին : Դա մի փոքրիկ ավան է քաղաքից հեռու : Այստեղ կան արքունական հանքեր և մի գործարան, ուր բոլոր աշխատավորներն աքսորականներ են : Ահա այս հանքերում և գործարանում պիտի աշխատի և՛ Գրիգորը, ինչպես մի բեռնակիր մշակ միշտ և անդադար, ամբողջ ցերեկը, ստորերկրյա մթին և խոնավ հանքերում, առանց իրավունքի գործարանի շրջապատից դուրս վրտք դնելու :

Տասն անգամ Անթառամն յուր յերկրորդ վորդուն ստիպեց այդ նամակը կարդալ : Նա այն օրն, ինչպես ասում էր ինքը, թաղում էր

յուր վորդուն: Նա հրավիրել եր բոլոր յուր մոտիկ ազգականուհիներին, վոր յուր ցավին ցավակից լինեն: Յեվ այդ կանայք վոխանակ մխիթելու, ավելի դրդուում էին նրա վիշտն իրանց կեղծ և անկեղծ հառաչանքներով, ինչպես կարեկցական դարձվածքներով: Նամանավանդ կեղեքվում եր նրա սիրտը, յերբ այդ կանանցից յուրաքանչյուրը հիշեցնում եր Գրիգորի սիրուն կերպարանքը, արեւելյան բորբոքուն յերեւակայութեամբ նկարագրելով նրան կրկնակի գեղեցիկ գույներով:

Հետագա ձմեռը ստացվեց յերկրորդ նամակը: Այս անգամ Գրիգորը մոռալ նկարագրություններ չեր անում: Յերեվում եր, վոր նա արդեն սկսել է ընտելանալ աքսորականի վիճակին, մխիթարում եր յուր մորը, հիշեցնում եր, թե Սիրիին ել մի մարդաբնակ աշխարհ է, թե այնտեղ ել մարդիկ են ապրում և այլն: Յեվ յուր դրությունն ավելի թեթև ցույց տալու համար գիմում եր համեմատական նկարագրությունների յուր բախտակիցների կյանքից: Մասնավորապես նա գրում եր

1899 12 2985-2005
 163 508 700 2985

մի նախկին հայ պաշտոնյայի մասին, վոր աքսորված եր քսան տարով իբր թե յեղեռնագործներին, դողերին ու ավազակներին դադտնի աջակցելու համար: Թե ի՞նչ է յեղել այդ մարդն առաջ, աստված գիտե, բայց յոթ տարի աքսորականի կյանքի դանությունները ճաշակելուց հետո, նա շատ մեղմ, բարեսիրտ և խեղճ մարդ է դարձել:

— Սյուպխիներին տեսնելիս սիրաս մխիթարվում ե, — ավելացնում եր Գրիգորն յուր ամակում:

Տարին անցնում եր տարու յեսակից, ժամանակն Անթառամին ևս ընտելացնում եր յուր վիճակին, հարկավ, արտասուքն և լացը նրա կյանքի անհրաժեշտ պահանջը դարձնելով: Ամեն անգամ, վոր նա հիշում եր (և յերբ չէր հիշում) այն բուպեն, յերբ վորդու կարմիր թափնակը սավառնեց ողում, նրա կրծքից դուրս եր գրում ծանր հոգոց, և ազլ կաթիլներով լողոտում էին նրա նիհարած



այտերը: Բայց այդ լոկ մի դառն յերազ եր
համեմատությամբ այն պատկերի, վոր միշտ
կանգնած եր Անթառամի աչքի առջև, վոր
միշտ հալածում եր նրան:

Ահա նա, ուրախ, անհոգ դեմքով, բաց ճա-
կատով, յերիտասարդական հրով վառված
աչքերով: Վորքա՛ն ուրախացնում եր Անթա-
ռամին վորդու այդ կերպարանքը, վորքա՛ն
հպարտանում եր և զմայլվում, տեսնելով
նրան ընկերների շրջանում բոլորից սիրուն,
բոլորից կայտառ, բոլորից աշխուժ: Այ՛ո՛,
ամբողջ թաղի մեջ չկար մի ուրիշը նրա նը-
ման: Յե՛վ այդ լոկ մայրական յերեակայու-
թյան արգասիք չէր, այլ մասամբ և իսկու-
թյուն: Քանի-քանի ազգական կանայք ստի-
պել են Անթառամին՝ թալիսմաններ կապել
Գրիգորի վզին, վոր նա ղերծ մնա չար աչք
դեպչելուց: Չոգնեցի՛ր՝ նրան այդ թալիսման-
ները:

Արդյոք, նո՞ւյնն է մնացել Գրիգորը Սի-
բիրում, թե՞ փոխվել է. չե՞ վոր անցել է
յոթը տարի նրա աքսորվելուց: Սակայն Ան-

թառամի յերեակայությունը կենդանի պատ-
կերացնում եր քսան ու վեց տարեկան Գրի-
գորին այնպես, ինչպես նա տեսել եր առաջ
և ինչպես անջնջելի դրոշմվել եր նրա հիշո-
ղության մեջ— տակավին պատանի, թալմ,
քսան ու մեկ տարեկան Գրիգորին: Յերեկն
յերեակայությամբ, գիշերն յերազում, միշտ
և անդադար այդ պատկերը կանգնած եր նրա
աչքերի առջև:

Յոթը տարի անցավ, ուրեմն մնում է
հինգ տարի: Անթառամը համբերություն կու-
նենա հինգ տարի ևս կրել յուր վիշտը: Նա
որեր և գիշերներ է հաշվում, թե յերբ պիտի
լրանա վորոշված ժամանակն և յերբ հիշում
էր, վոր տաժանակիր աշխատությունից ա-
զատվելուց հետո ևս Գրիգորը չի կարող վե-
րադառնալ հայրենիք, գլուխը թեքում եր
կրճիին և անչարժ մնում:

Վորդին աքսորվելուց հետո նա մի առ
ժամանակ ասածուց յերես եր դարձրել, հա-
մողված, վոր նա անարդար վարվեց յուր
հետ: Բայց կարո՞ղ եր նա յերկար միջոց

անհաշտ մնալ նրա հետ, վոր միխթարութեան
և սիրտանքի անսպառելի աղբյուր է թշվառ-
ների համար: Յեվ ահա նա դարձյալ ամեն
յերեկո կանգնում եր յեկեղեցու սյուներից
մեկի յետևում, ձեռները բարձրացնում եր
վերև, աչքերը հառում եր աստվածամոր
պատկերին և յերկար, յերկար ժամանակ ան-
շարժ մնում միևնույն դրութեան մեջ: Հա-
նուն մայրական սիրտ, նա աղերսում եր աստ-
վածամորը՝ միջնորդ լինել, վոր աստված
նրան մի ուր արժանացնի յուր վորդու տե-
սութեանը:

— Չմեռնեմ, մի անգամ ել տեսնեմ նը-
րան, — կրկնում եր նա բյուր անգամ կրկնած
միևնույն դարձվածը:

Այսպես անցկացրեց Անթառամը տաս-
ներկու տարի, միշտ հուսալով, թե պետք է
արժանանա վորդու տեսութեանն և միշտ սպ-
րելով միմեայն այս հույսով:

Վերջապես, նա ստացավ վաղուց սպա-

սած լուրը: Յերջանիկ ուր, ո՛ր, յերբ տասներ-
կու տարվա ընթացքում առաջին անգամ յե-
րևեցավ ուրախութեան ժպտտ Անթառամի
թառամած դեմքի վրա: Գրեղորն ազատվել
է տաժանակիր աշխատանքից, ազատվել է ա-
ռավոտից մինչև յերեկո մթին և խոնավ
ստորերկրում աշխատելուց, ազատվել է յե-
ղեռնագործների, դողերի, ավազակների և
կոպիտ զինվորականների հասարակութունից,
նրանց հետ մի բնակարանում ապրելուց, մի
ամանից ուտելուց, մի ամանից խմելուց, աք-
սորականի կապանքներից:

Իսկ ա՞յժմ...

Ահա ինչ եր ավելացնում Գրեղորն յուր
նամակի վերջում.

«Հենց վոր ժամանակս վերջացավ, վա-
մանդերը թողթ տվեց: Ազատվեցի անիծված
դժոխքից, յեկա քաղաք: Հաց չունեյի, շոր
չունեյի, համարյա ակլոր եյի, ասացի ինչ
անեմ:

«Յստեղ մեկ մարդ կա քեարժուչի (աղ-
յուսի) զալող (գործարան) ունի. աղաչեցի,

պաղատեցի, վայնաչարի տեղ առավ ինձ: Ք
հարկե, նրա ել խիղճն յեկավ ինձ, ինչու
վոր ինքն ել առաջ ինձպես կատորժնիկ (աք-
սորական) ե յեղել: Հիմա, գոհություն ա-
բարիչ աստծուն, յես պրիկաչչիկ (գործակա-
տար) եմ զավուգում, գլուխս մի կերպ պա-
հում եմ, յեթե ինձանից հարցնես, վողջ, ա-
ռողջ եմ, սիրելի ծնող, շատ ել Ֆիլքր մի ա-
նիր: Մեկել, սուտ-ղորթ, ասում են, վոր նոր
թագավորը թախտ (զահ) նատելու որը մանի-
ֆեստ (հրովարտակ) ե դուրս բերել կատորժ-
նիկների համար: Աստված հաստատ պահի:
Իսկը չեմ իմանում՝ վոր կարտոժնիկ-
ների համար ե թագավորի վողորմությու-
նը: Յերեկ ընկերներիցս մեկն ասում եր, վոր
յես ել հույս աստծո, աղատվողները մեջ պի-
տի լինեմ: Կամանդիրին հարցրի, ասեց մա-
նիֆեստը մինչև որս չի սպացել, չեմ իմա-
նում կա, չկա: Եսպես իմանաք: Հենց վոր
հասավ, իսկույն կլմանամ, կգրեմ: Գոհու-
թյուն աստծո: Կրկին աղաչանքս ե, վոր շատ
ել սիրտդ չմաշես, աղոթք անես մեղքերիս

համար, ժամ գնաս, ջուխտ-ջուխտ (դույզ-
դույզ) մոմ վառես: Սիրելի մայր, Միխակին,
Թագուհին, Սեյրանին և այլ բարեկամաց ու
հարցնողաց շատ-շատ բարև: Հավիտյանս
հավիտենից ամեն:

Մնամ քեզ կարոտ, հարազատ վորդի
սիրելունիկ՝

Գրիգոր Խանդավանց»:

Սակայն անցավ մի տարի ու կես ևս, իսկ
Գրիգորի հետագա նամակների բովանդակու-
թյունը գրեթե անսիրտիս եր մնում: Կայսե-
րական մարդասեր հրովարտակը տակավին
սպասվում եր: Գրիգորը սրան նրան հարց-
նում եր, վոչ վոք մի վորոչ պատասխան չեր
տալիս: Բայց նա դարձյալ մխիթարում եր
մորը, դարձյալ հույս եր տալիս յուր վերա-
դառնալու մասին:

Յեկ Անթառամն անհամբեր սպասում եր.
որերը նրա համար անցնում եյին անտանելի
դանդաղությամբ, մինչ կլրանար այն ժամա-
նակամիջոցը, վոր տևում եր ընդհանարաբ

Գրիգորի մի նամակից հետո մինչև մյուսի ստանալը: Ստացվում էր հաջորդ նամակը, և դարձյալ նույն անորոշ բովանդակությամբ:

Մի ամառային օր, իրիկնադեմին, Անթառամը նստած դավթում քառասուն ու յերկու սեացած ու չորացած սիսեռների վրա գուռակում էր ասպպան: Հանկարծ շնչասպառ ներս վազեց նրա յերկրորդ վորդին, Միխակը, և ուրախ-ուրախ գոչեց.

— Ի՞նչ կտաս, վոր ասեմ...

Անթառամը, չնայելով իր ծերությանը, աշխուժությամբ թուալ վոտքի, խլեց վորդուց նամակը, վոր սա բռնած ունեւր յուր ձեռքում: Նա մոռացավ, վոր ինքը կարդալ չգիտէ:

— Շո՛ւտ արա, հոգիս մի հանիր, կարդա՛, — դոչեց նա նամակը վերադարձնելով վորդուն:

Կարդաց: Նամակը գրված էր Գրիգորի ախրոջ կողմից: Սա հայտնում էր, թե Գրի-

գորն արդեն ազատություն է ստացել և խուռն ուղարկվել հայրենիք և թե շուտով, յերևի տեղ կհասնի:

Ճի՞շտ է, արդյոք: Մի գուցե գրողը մի չար թշնամի յե, վոր կամեցել է դառն կատակ անել, մի գուցե «ազատություն» բառը մի ա՛յլ, խորհրդավոր նշանակությամբ և դործածված նամակի մեջ:

Բայց աստված լսել էր Անթառամի աղերսանքը. նա չպիտի մեռներ, մինչև վոր տեսներ յուր վորդուն: Չանցավ նամակ ստանաներ յուր վորդուն: Չանցավ նամակ ստանալու օրից մի շաբաթ, Միխակը մի օր դարձյալ տուն վազեց շնչասպառ և այս անգամ ձեռքումը մի հեռագիր... Գրիգորից: Համառոտ խոսքերով նա հայտնում էր, թե հասել է Ռ... նահանգտկան քաղաքը և ամենաշատը մի ամսից հետո կլինի իր ծննդավայրում:

— Մի ամիս, մի ամիս, չմեռնեմ ու տեսնեմ, չմեռնեմ ու տեսնեմ...

Այս խոսքերը կրկնելով, Անթառամն այն գլխերը համարյա մինչև լույս չկարողացավ քնել, այնքան նա հուզված էր ուրախություն-

նից : Ի՞նչպես . միթե արդարև տասնուհինգ տարուց հետո նա կրկին պիտի գտնե յուր մեռած ու կորած վորդուն :

Որը կիրակի յեր : Անթառամի վորդինք-
րը — Մելիսկը և Սեյրանը ճաշից հետո գնացել էին քաղաքի շրջակայքը՝ դրոսներու : Նա նստած եր միայնակ թախտի վրա, պատուհանի առջև և, ձեռները կրծքին դարսած, յուր մոռյլ ու անորոշ հայացքը հառել եր յերկնքի հեռավոր հորիզոնին, ուսկից նա, կարծես, մի բան սպասում եր :

Նա մի քանի րոպե առաջ դարձյալ հմայել եր քառասուն ու յերկու սխեռների վրա և յերեք կարգի բաժանված սխեռները միջին կարգը դուրս եր յեկել — չորս, յերկու, մեկ-մեկ իրարու հետևից, վոր ասել է ճանապարհ :

— Չմեռնեմ, մի անդամ ել տեսնեմ, չմեռնեմ, մի անդամ ել տեսնեմ, — արտասա-

նում էյին դարձյալ նրա ցամաքած շրթունքները :

Այնինչ նրա անորոշ հայացքը շարունակ հառած եր յերկնքի հորիզոնին, ուր փոքր աւ փոքր բարձրանում էին ամառային բամբակազույն ամպերի կույտերը և զելզվում, միմյանց վրա : Անդադար չարժվելով, այդ ամպերը զանազան ձևեր էյին ընդունում — մերթ բարձրագագաթ լեռների, մերթ հրեշավոր կենդանիների : Յեթե քառասուն ու յերկու սխեռների դուշակությունը պիտի կատարվի, թող ամպերն ել դուշակեն, թող նրանց բազմաթիվ կույտերից մինը կառթի ձև, ձիու կամ ուղտի կերպարանք ներկայացնի, այն ժամանակ Անթառամը կիմանա, վոր ճանապարհը դատարկ չէ : Յեվ ահա, հազիվ սնահավատ կնոջ մտքով անցել եր այս խորհրդավոր ցանկությունը, յերբ կապտադույն հորիզոնի վրա ձգվեց մի սպիտակ զվիծ, այնուհետև նա ծրուվեց այս կողմ, այն կողմ և պատկերացավ... մի հսկայական ձյունադույն թափանցիկ ձի՛ քուլա-քուլա ամպերից : Անթառամի սերտը

սկսեց ուժգին բարախել. կարելի՞ բան է, վոր այս բոլոր գուշակություններն ապարդշուն մնան:

Մի ամբողջ ժամ նա այս դրությամբ անշարժ նստած էր. փոքր առ փոքր նրա ջղերին տիրեց թուլություն և նա ընկղմվեց մի տեսակ թմրության մեջ: Յերբեմն-յերբեմն նա ցնցվելով աթափվում էր, նայում էր աջ ու ձախ, ահանջ էր դնում դեպի դուրս և կրկին գլուխը թեքում կրծքին:

Հանկարծ նա ուժգին ցնցվեց, վեր ցատկեց տեղից և սկսեց ահանջ դնել: Նրան թրվում էր, թե լսում է ինչ-վոր զանգակների թույլ հնչյուն, հետո վոջկուչ չի լսում և տիրում է դարձյալ միևնույն լռությունը շրջակայքում: Բայց վոչ, յեթե նրա ուղեղը խանգարված չէ, յեթե նրա լսելիքը չի խաբվում, արդարև լսվում է փոստային կառքի զանգակների ձայն և լսվում է հետզհետե ավելի պարզ ու վորոչ: Ահա նա, վերջապես, բոլորովին մոտեցավ և, կարծես, հնչում է պատահանի տակ: Հանկարծ զանգակների ձայ-

նին խառնվեց կառքի անիվների դղրդշունը. խուլ փողոցն աղմկվեց մի քանի վայրկյան և ամեն ինչ դարձյալ լռեց...

Անթառամի վտտները ներքին հուզմունքից սկսեցին դողալ: Նա վագեց դուրս, վորքան կարող էր շտապով ցած յեկավ փոքրիկ սանդուղքով, ձեռներով ծնկները բռնած: Գալթի մեջտեղում կանգնած էր մի անձանոթ մարդ և կասկածանքով նայում էր դեռ ու դեռ...

Այդ մարդը հազած էր սեպուլցն և կողիտ մահուղից ուղարկան ձևով կարած կապայի նման մի կարճ բան, հասարակ ղինվորականի կոչիկներ երկայն անկարբուրդով և կոշտ կտավից կարած լայն վարտիկ: Նա դըլխին դրած էր սպիտակ վոչխարենուց կարած բոլորակ գդակ, վորի բավական յերկայն մազերը ծածկել էին նրա ճակատն ամբողջովին:

Այդ մարդը նիհար էր, կուրծքը ճնշված, ներս ընկած, մեջքը կորսնցած, մի ուսը մյուս

սից նկատելի կերպով բարձր, յերեսը խորշոմած, միբուքը գլգլված, աչքերը խորն ընկած, այտերը, ծնոտը և կոկորդի վոսկորը նիհարությունից դուրս ցցված: Նրա ձեռները վոսկորոտ եյին, կոշտ ու արինդ, ինչպես վորմնադրի կամ տարին տասներկու ամիս քար կրող մշակի ձեռները, կապույտ ջղերը վորոշ գծավորված յերկաթադուլն և կուռկուռված կաշվի տակից, մատների հողերը դուրս ցցված, այնպես վոր հիշեցնում եյին մոխրախառն կրակի մեջ խորոված շաղանակներ:

Նրա վոտները ներքեի կողմից յերևում եյին ծուռ և յերբ նա, յուր ձեռնախոյտի վրա հենվելով, մի քանի քայլ առաջ յեկավ, նշմարվեց, վոր կաղում ե փոքր ինչ. կարելի յեր կարծել, վոր նրա վոտների վոլոզները իրանց տեղումը չեն կամ գարշապարներն ուսած են: Անախորժ, վերին աստիճանի անախորժ և, միևնույն ժամանակ, կասկածավոր ու յերկյուզալի տպավորություն եր դործում այդ մարդու ամբողջ կերպարնաքն առաջին

հայացքից: Նրան տեսնողն և՛ կխղճար և՛ կըսարսափեր ակամա, իսկ յեթե ըսեր, վոր վորմուքություն ե աղերսում, կմերժեր կամ յեթե վորորմեղ կամենար, չեր մոտենալ նրան, հեռվից կձգեր փողն և կհեռանար:

Անթառամը շտապելով և հագլիվ հագ իր դողդոջուն քայլերը փոխելով, անցավ այդ մարդու մոտով, առանց ուշադրություն դարձնելու նրա վրա:

Անծանոթը խորը խորչերի մեջ թաղված աչքերով վոտից դուրս չափեց նրան ուշադրությամբ: Տարորինակ և դարմանալի յեր այդ աչքերի արտահայտությունը: Կարծես, նրանք վաղուց գրկվել եյին կենդանությունից, կարծես, նրանց խոշոր բիբերն անշարժ եյին, սպիտակ շրջանակները սառած, հողադուլն կոպերը քարացած:

Նա նայեց Անթառամի յետևից, նայեց աջ ու ձախ, հաստաբուն թթենուն, տան փոքրիկ փայտյա պատշգամբին, կիսավեր շրջապարսպին և գլուխն յերկմտորեն շարժեց: Թրվում եր, վոր նա տատանման մեջ ե. չգիտե

ինչ անե, խոսե թե լուե, առաջ գնա թե յեա
դառնա, բարկանա թե ուրախանա :

Այնինչ Անթառամը հասալ դըրսի դռնե-
րին, նայեց դեպի փողոց և կրկին շփոթված
յետ դարձալ: Այս անգամ նա նկատեց ան-
ճանոթին և, չմտտենալով նրան, հուզված
ձայնով հարցրեց.

— Դո՞ւ է յես կառապանը:

Անճանոթը լուռ եր:

— Կառապանը դո՞ւ է յես:

Անճանոթը լուռ եր:

— Բաս ինչո՞ւ կանգնեց մեր դռների
մոտ... Ուրի՞շ է յեկողը... Նա չեկա՞վ...

Անճանոթը փայտի ողնոթյամբ մի քայլ
առաջ դրեց: Նա դարձյալ լուռ եր և միայն
յուր կիսահենդան և յերկմիտ հայացքը չեր
հեռացնում Անթառամի յերեսից:

— Վողորմած աստված, ինչո՞ւ յես ինձ
ճաղր անում,— գոչեց Անթառամը դառնու-
թյամբ,— յես սպասում եմ... Ձե, կանդնիր,
այ մարդ, դու, ո՞վ էս... Տեր Աստված...
ավազակ... ի՞նչ էս ուզում ինճանից...

Այստեղ անճանոթն յերկու ձեռները հե-
նեց փայտի վրա, մեջքը քիչ թեքեց և հա-
ռաչելով արտասանեց հետևյալ խոսքերը.

— Կատարվեց ասածս... վոչ յես ճանա-
չեցի, վոչ նա յե ճանաչում...

Անթառամը սարսափած և անզիտակցա-
րար յետ կանգնեց: Այդ մարդու ձայնը նրա
հոգու խորքում զարթեցրեց վաղուց, շատ
վաղուց թմրած մի բան: Մի թույլ հիշողու-
թյուն լուսավորեց նրա հոգին: Այդ նրա
տասնութ տարի առաջ մեռած և մոռացված
ամուսնու ձայնն է, այո՛, իսկ և իսկ այն
թույլ, խեղճ վողորմելի ձայնը, միայն ավելի
տկար: Բայց ի՞նչպես, կարելի՞ բան է, վոր
մեռելը վերկենա տասնութ տարվա գերեզմա-
նի խորքից: Միթե նա յերազումն է կամ գու-
ցե ցնորվե՞լ է:

— Յես Գրիգորն եմ... ճանաչեցի՞ր...

Ճի՞շտ լսեցին, արդյոք, Անթառամի ա-
կանջները, թե՞ դարձյալ շարունակվում է
նրա զառանցանքը: Սակայն նա կարող է յե-
րազում լինել, կարող է անգամ ցնորված լի-

նեւ, բայց վոր չճանաչի իր Գրիգորին, վոր կարողանա մտղու չափ խարվել նրան տեսնելիս, դա անկարելի բան է: Յեւ վոչ միայն նա, այլև ամենքը, վոր մի անգամ տեսել են նրա գեղեցկադեմ, նրբակաղմ վորդուն, միթե յերբևիցե կարող են չճանաչել թեկուզ տասնուհինգ տարուց հետո:

Ինչպես քնից նոր զարթնած նա շփեց ձեռներով աչքերը, վոր ավելի պարզ դիտե յուր առջև կանգնած տարորինակ անձնավորութիւնը: Յեւ կար մի անխուսափելի, մի անբաժան յերևույթ, վոր խանգարում եր նրան տեսնել իսկութիւնը:

Դա Գրիգորի, նախկին Գրիգորի սիրուն կերպարանքն էր, այնպես, ինչպես սպավորվել էր նրա հիշողութիւն մեջ: Սա յե ահա վառ սիկ Անթառամի իսկական վորդին, այս սիրուն պատկերը, վոր տասնուհինգ տարի շարունակ վառ պահել է նրա յերևակայութիւնը. վոր ձուլվել ու միացել է նրա հոգու հետ, վոր գիշերը խլել է նրա քունը, ցերեկը հանգատութիւնը: Յեւ հանկարծ այդ մյուսը,

այդ ավաղականման տղեղ, այլակերպ անծանոթը հանդգնում է...

Դա մի ոգերևույթ է...

— Յեթե իմանայի, վորմայրս ել ե ինձ մոռացել, Սիրիբը ինձ համար ավելի լավ կլիներ...

Բնական և խորին թախծութեամբ արտասանված պարզ բողոքը հանկարծ սթափեցրեց մոլորված կնոջը: Քողն ընկավ նրա աչքերից. խաբուսիկ պատկերը չքացավ, դառն իրականութիւնն ամենայն մերկութեամբ յերևան յեկավ մինչև այդ վայրկյան ցնորք համարված այլանդակ եյակի կերպարանքով:

Նա ճանաչեց յուր վորդուն, ճանաչեց նրա ձանը, նրա աչքերը: Նրա վտանները թուլացան. հարվածն անսպասելի յեր և սաստիկ: Նրա գլուխը պտտեց, աչքերը մթնեցին, գուցե նա տեղն ու տեղը գետին ընկներ, յեթե վորդու նիհար, վոսկորոտ ձեռները նույն վայրկանին չգրկեյին նրան:

Այս ամբողջ տեսարանը կատարվեց մի քանի վայրկյանում միայն:

Յերբ վորդին աջ կուռը վերցրեց մոր ուսից, նրա կապայտի թևը մի վրքը յետ քաշվեց: Յերևեցավ նրա բազուկը, վորի վրա յերկաթե կապանքը անջնջելի կերպով դրոշմել եր յուր կոշտ հետքը սև և լայն ապարանջանի ձևով:

— Հիմի ճանաչո՞ւմ ես,— ասաց նա, պարզելով յուր բազուկը Անթառամի աչքի առջև:

Այդ բազուկի վրա կար ծննդյան մի մեծ և բոլորակ խալ:

Անթառամը բաց թողեց վորդուն յուր գրկից, նայեց նրա վրտից մինչև գլուխ աղճատված կերպարանքին: ձեռները բարձրացրեց վեր և, յուր ալեղարդ գլխին մի ուժգին հարված տալով, դոչեց դառն ձայնով.

— Յերանի մեռնեյի և քեզ չտեսնեյի...

Թիֆլիս, 1889 թ.

ՖԱԴՄԱՆ ՅԵՎ ԱՍԱԴԸ

Յերբ վորդին աջ կուսը վերցրեց մոր ուսից, նրա կապալի թևը մի փոքր յետ քաշվեց: Յերևեցավ նրա բազուկը, վորի վրա յերկաթե կապանքը անջնջելի կերպով դրոշմել եր յուր կոշտ հետքը սև և լայն ասպարանջանի ձևով:

— Հիմի ճանաչո՞ւմ ես,— ասաց նա, պարզելով յուր բազուկը Անթառամի աչքի առջև:

Այդ բազուկի վրա կար ծննդյան մի մեծ և բոլորակ խալ:

Անթառամը բաց թողեց վորդուն յուր գրկից, նայեց նրա վրտից մինչև գլուխ ազճատված կերպարանքին: ձեռները բարձրացրեց վեր և, յուր ալեղարդ գլխին մի ուժգին հարված տալով, գոչեց դառն ձայնով.

— Յերանի մեռնեյի և քեզ չտեսնեյի...

Թիֆլիս, 1889 թ.

ՖԱԴՄԱՆ ՅԵՎ ԱՍԱԴԸ

Յերեկվա հեղձուցիչ տոթից թմրած
կյանքն իրիկնադեմին կենդանություն եր
ստացել: Բազարում տիրում եր անասելի
աղմուկ: Մրգավաճառները, կանաչեղեն և
կաթն ու պանիր ծախողները, ձայն ձայնի
տված, արևելյան զարդարուն խոսքերով գո-
վաբանում եյին իրանց սպրանքը: Վաճառա-
կանների և արհեստավորների խանութները
փակվում եյին, հայ ու թուրք վերադառ-
նում եյին տուն:

Հեռվում զողանջում եյին ջրխտոննեյական
յեկեղեցիների զանգերը, իսկ Ջումա-մասճիթի
մինարեթի զազաթից մոլլա Սալիլի ալանի*

* Մոլլայի կոչը—մյուսուլմաններին աղոթելի
հրավիրելը:

սուր յերևեցները քարասիրտ մյուսուրմանի սիրտն անգամ բորբոքում էյին աստվածային հրով: Բարեպաշտները խորին ջերմեռանդությամբ սալավաթ** էյին քաչում իրենց յերեսին, նամազ*** էյին անում և, մասճիթներէ ավագաններէ մոտ կկղած, ղեհաստամազ**** էյին անում: Ամենքը փառարանում էյին մեն մի ալլահին և նրա ամեն մի մարդարեյին:

Մոայլ և անտարբեր եր նույն ժամին մի յերիտասարդ անցորդ: Յեվ նրա մուսյությունը չեր նմանելում վոչ տաժանակյաց մուրացիկանի թշվառությանը, վոչ նավը խորտակված վաճառականի թախճությանը և վոչ հինդ նամաղից մեկն ել չկատարած մյուսուրմանի անձկությանը:

** Սալավաթ նշանակում է այն, յերբ մուսուլմանները Մահամմեդին հիշելիս իրենց յերեսը աջ ձեռքով շփում են:

*** Աղոթք:

**** Լվացումն: Մուսուլմանները աղոթելուց առաջ լվանում են իրենց յերեսը, բազուկները և վրաները: Այս արարողութունն անվանում է «ղեհաստամազ»:

Նա անցնում եր միջին բազարով, բարձրանում եր դեպի քաղաքի Իմամու կոչված թաղը: Վոչ վոք և վոչինչ չեր դրավում նրա ուշադրությունը: Յեվ նրա ուղղափառ մյուսուրմանական զգացումները չեյին վրդովվում յերեք դարվիշ Ահադի դեմ, վոք, հայերին շողոքորթելու համար, իր վոզեորիչ ճայնով յերգում եր.

«Հիսուսն իջավ վայր—յերկնքից, նա լուր բերեց—այն լախարհից... (Իսա դյալդի—սամավաթտան, խարար վերդի—գիւրմաթտան)...

Յերիտասարդը գնում եր մոլոր քայլերով, դուրիը կրծքին թեքած և աջ ձեռը խրած մեջքի արծաթյա գոտիի մեջ: Կասես, նա անբախա Մյաջնունն եր, վոք, իր հոր տունը թողած, դիմում եր Արաբիայի ամայի և հրակեզ դաշտերը, յերգելով իր սերը Լեյլին: Նա նման եր և՛ մեծ մարգարեյի սիրեցյալ Քեյրին, վոք, յերեակայության ովկիանոսը խորասուզված, հորինում եր մինն այն դրախտային յերգերից, վորոնցով արար

չահելը* ակորժանք եր նվիրում մարդարե-
յից մարդարեյի սբբաղան լսելիքին:

Անցավ նա բաղարն, անցավ Իմամուլի
կեսը, և ծովելով մի նեղ փողոց, կանգ առեց
մի վիտապեր տան առջև: Փողոցում մարդ
չկար, միայն հեռվում խաղում էյին մի
խումբ յերեխաներ և մի վոտաբոբիկ, կիսա-
մերկ մարդ հավաքում եր բաղնիսի պատերեց
քաշ արած ճերմակեղենը:

Նա հանեց աջ ձեռքը դոտիի միջից, ուղ-
ղեց ուղտագույն չուխայի և մահուդյա մե-
խակագույն կարճ արխալուզի լայն փեշերը,
չփեց նորաբույս, սեաթույր ընչացքը: Դա
մի հտիայատիպ տղամարդ էր: Հայտնի իր
առնական դեմքով, իր բարձր հասակով, իր
վայելուչ կազմվածքով, իր անվահեր սրտով:
Մի խոսքով, զա սարի-թորփաղցի Ասաղն
եր:

Ձեռները չուխայի տակ մեջքին դրած, նա
յերկար ժամանակ մտիկ եր անում դեմ ու
դեմ, դեպի մի փոքրիկ նորաչեն տան մուտք-

* Բանաստեղծ:

մոխրագույն դռները: Նրա մերթ ընդ մերթ
հառաչելը, կրակոտ աչքերի արտասովոր
փայլն և անհամբեր շարժումները ցույց էյին
տալիս, վոր նա մեկին սպասում է:

Հանկարծ նրա տխրամած դեմքի վրա
փայլեց մի ուրախ ժպիտ: Մուգ-մոխրագույն
դռներից մեկը հանդարտ բացվեց, յերևաց մի
յերիտասարդ կնոջ գլուխ, ծածկած մետաք-
սյա ճուրխիով (գլխնոց) և ճակատը զարդա-
րած տաճկական վոսկիների շարքով:

Ասաղը թռավ առաջ, մոտեցավ նորաչեն
տանը:

Մարդ շատ նուրբ լսելիք պիտի ունենար,
վոր կարողանար ըմբռնել յերիտասարդ կնոջ
չչնջյունը:—Այնքան թույլ եր նա, յերկչոտ
և կցկտուր:

Յեվ Ասաղի լսելիքն ուներ այդ նրբու-
թյունը, ուներ լոկ այդ վարդագույն չբր-
թունքների համար, վոր սփռում էյին դեպի
նա յերկնային յերջանկության բուրմունքը:
Նա կանգնած եր մուգ-մոխրագույն դռներից
հինգ քայլաչափ հեռու, մեջքը տված պատին՝

չահելը* ախորժանք եր նվիրում մարդարե-
յից մարդարեյի սրբազան լսելիքին:

Անցալ նա բաղարն, անցալ իմամլույի
կեսը, և ծովելով մի նեղ փողոց, կանգ առեց
մի վիտայեր տան առջև: Փողոցում մարդ
չկար, միայն հեռվում խաղում էին մի
խումբ յերեխաներ և մի վտարբորիկ, կիսա-
մերկ մարդ հավաքում եր բաղնիսի պատերից
քաշ արած ճերմակեղենը:

Նա հանեց աջ ձեռքը դոտիի միջից, ուղ-
ղեց ուղտագույն չուխայի և մահուռյա մե-
խակագույն կարճ արխալուղի լայն փեշերը,
չվեց նորարույս, սևաթույր ընչացքը: Դա
մի հակայատիպ տղամարդ էր: Հայտնի իր
առնական դեմքով, իր բարձր հասակով, իր
վայելուչ կազմվածքով, իր անվահեր սրտով:
Մի խոտքով, դա սարի-թորփաղցի Ասաղն
էր:

Ձեռները չուխայի տակ մեջքին դրած, նա
յերկար ժամանակ մտիկ եր անում դեմ ու
դեմ, դեպի մի փոքրիկ նորաչեն տան մուգ-

* Բանաստեղծ:

մոխրագույն դռները: Նրա մերթ ընդ մերթ
հառաչելը, կրակոտ աչքերի արտասովոր
փայլն և անհամբեր շարժումները ցույց էին
տալիս, վոր նա մեկին սպասում է:

Հանկարծ նրա տխրամած դեմքի վրա
փայլեց մի ուրախ ժպիտ: Մուգ-մոխրագույն
դռներից մեկը հանդարտ բացվեց, յերևաց մի
յերթտասարդ կնոջ գլուխ, ծածկած մետաք-
սյա ճուրխիով (գլխնոց) և ճակատը զարդա-
րած տաճկական վոսկիների շարքով:

Ասաղը թռավ առաջ, մոտեցավ նորաչեն
տանը:

Մարդ շատ նուրբ լսելիք պիտի ունենար,
վոր կարողանար ըմբոնել յերթտասարդ կնոջ
չչնչյունը:—Այնքան թույլ եր նա, յերկչոտ
և կցկտուր:

Յեվ Ասաղի լսելիքն ուներ այդ նրբու-
թյունը, ուներ լոկ այդ վարդագույն շքե-
թունքների համար, վոր սփռում էին դեպի
յնա յերկնային յերջանկության բուրմունքը:
Նա կանգնած եր մուգ-մոխրագույն դռներից
հինդ քայլաչափ հեռու, մեջքը տված պատին՝

պատահական անցորդի անհամեմատ հայացքից աննկատելի մնալու համար:

Ի՞նչ էլին շնչում նրանք, զիտե միայն Նա, վոր քննում է մահկանացուների սիրտն և վորի համար դադարիք չկա: Իսկ մենք մեղանչած կլինենք ճշմարտության դեմ, յեթե ասենք, թե շնչունը տեեց հինգ բույրեցից ավելի:

Մուգ-մոխրագույն դռները կրկին փակվեցին, և տաճկական վոսկիլներով զարդարված գլուխն անհայտացավ, տաներով իր հետ Ասաղի խորին հոռաչանքը: Նա դարձյալ մնաց միայնակ: Այժմ նրա դեմքն այլայլված է, աչքերն արյունի հոսանքից կարմրած, իսկ առնական լայն կուրծքը հորդոր շնչառությունից ուժգին բաբախում է:

— Ամենակարո՛ղ աստված, տո՛ւր ինձ համբերություն, — արտասանեց նա հնքն իրեն:

Յեւ այս խոսքերը չկարողացան թափանցել ամուր փակված դռներից ներս:

Նա դարձյալ սպասում էր, բայց, ալա՛ղ!

մուգ-մոխրագույն դռները հեռզհետե մթնանում էլին և վոչ բացվում, իսկ նա, քաղցած դայլի պես, քթի տակ խուլ մռնչալով, ամառի փողոցում շրջում էր յետ ու առաջ:

Մութը թանձրանում էր, կապտագույն յերկնքում փայլում էլին պայծառ աստղերը, տիրում էր թախծալի լուսթյուն, բազարը խաղաղվել էր:

Հեռվից լավեց քայլերի ձայն, փողոցի անկյունում յերեսաց մի մթին պատկեր: Ասաղը շարունակ անցուղարձ էր անում:

Պատկերը փողոցի մեջտեղով դանդաղում թյամբ շարժվում էր առաջ: Ասաղը չէր լսում նրա վոտների ձայնը: Պատկերը բոլորովին մոտեցավ: Նույն վայրկյանին, յերբ Ասաղը յետ դարձավ, նրա ծխախոտի կրակի աղոտ ճառագայթը լուսավորեց... միջահասակ, գեր մարմնով, կարճ և հինայած միւրուքով մի մարդու: Մարդը, Ասաղին ճանաչելով, դայրացավ և տեղն ու տեղը մնաց բեկեռված:

Ո՞վ էր նա...



Յոթն անգամ լուսինը շրջան եր գործել
 այն որից, յերբ Ասադի աչքը կզավ խմամ-
 լուցի մուլա Ղանիի աղջկան, Ֆաթմային: Ա-
 ուղին անգամ նա տեսել եր նրան Սարի-
 թորփաղ արվարձանում: Ֆաթման հյուր եր
 իր Բազիմ անուևով քրոջ մոտ, վոր սարի-
 թորփաղցի Խալիլ աղայի կինն եր:

Նույն պահին, յերբ Ֆաթման իր քրոջ
 տան քսկում առանց շալի նստած եր, Ասադն
 իրանց տան կտրում աղային յեր թոցնում:
 Նա տեսավ Ֆաթմային, և իսկույն նրա սիր-
 ւը կրակ ընկավ:

Յեւ վոր պարսիկն անտարբեր կմնար,
 յեթե մի վայրկյան տեսներ Ֆաթմային—նրա
 սաթի պես սև աչքերը, կամարակապ ունքե-
 րը, ճակատի կոլորիկ խալը, յերկայն թեր-
 թերունքները, կարմիր թշերը, սալտակ,
 լիք-լիք կոկորդը, մանալանդ բարակ դանա-
 ուզ շապկի տակ թաղնված այն յերկու նը-

ները, վոր շախ-շախ դողդողում էյին, յերբ
 Ֆաթման սիգածեմ քայլում եր:

Այդ որից սկսած Ասադը գլշեր ու ցերեկ
 տանջում եր իր մորը, վոր սա անպատճառ
 հարսնախոս զնա Ֆաթմայի մոր մոտ: Պա-
 ոավ Նուրջնանը մի անգամ վորձեց Բազիմի
 մոտ ակնարկություն անել, բայց մի այն-
 պիսի պատասխան ստացավ, վոր ստիպվեց
 այլևս չխոսել այդ մասին:

Ֆաթման զեղեցիկ եր և բավական հա-
 լուստ. շատ բեզեր ու հաջիներ կկամենային
 նրան կին ունենալ: Բայց, իբրև վճռված
 նրան, խոսում էյին Հաջի Ալեաքարի մա-
 սին: Հաջին իմամու թաղի ամենաառաջին
 մարդն եր: Իսկ ո՞վ եր Ասադը:—Մի հասա-
 րակ արծաթադործ...

Բայց նա չհուսահատվեց: Հաջի-Ալեաք-
 արի յերեք ահապին քարվանսարաների և
 մեծ անվան դեմ միայն մի զենք ուներ—իր
 առնական զեղեցիությունն և քաջասրտու-
 թյունը: Յեւ նա վճռեց այդ զենքի բոլոր
 ուժով մրցել Հաջիի հետ:

Մի անգամ Փաթման դարձյալ իր քրոջ տանն եր: Ասադը դարանամուտ յեղավ իրենց տան կտրում և աշնտեղից աչքունքով սկսեց նետեր արձակել գեղեցկուհու սրտին: Փաթման լսել եր նրա անուռը, գիտեր, վոր նա գեղեցիկ տղամարդ է, քաջասիրտ է և Սարի-Թորփաղի յերիտասարդների պարազուրկը— ջահլըբաշին— է: Փաթման տեսավ Ասադին, ծիծաղեց, կարմրեց և փախավ ու մտավ տուն:

Դա բարեգուշակ նշան եր: Ասադի հույսերն ամրացան: Բորբոքված սրտով նա շատ անգամ, յերբ Փաթման յերկար միջոց յուր քրոջ տանը չեր յերևում, գալիս եր իմամ-լու: Գալիս եր՝ դեթ հեռվից տեսնելու իր սիրածին, վոր գիշերը կարողանա խաղաղ զընել: Բայց այդ նրան հաջողվում եր վոչ ամեն անգամ. միշտ փողոցը դատարկ եր լինում և միշտ Փաթման—անդդուչ, վոր իր գլուխը դռներից դուրս բերե:

Հաջի Ալեաքպարը Փաթմայի և Ասադի այս գաղտնի և առայժմ անմեղ հարաբերու-

թյունն իմացավ, մի անգամ ել ինքն իր աչքով տեսավ Ասադին իր ինտադեմին Փաթմայի տան դռների դեմուղեմ:

Նա յերգվեց Ասադի հիմար այցելություններին վերջ տալ: Յեվ ահա իրիկնային միտան մեջ պատահամոք յերկու և խոյանները կանդնած ելին դեմ հանդիման:

— Բեա՛Քը, — արտասանեց Հաջի-Ալեաքպարը, աջ ձեռը տանելով չուխայի տակ դեպի մեջքը:

Ասադը լուռ եր: Յեթե մի փոքր լույս լիներ, կարելի յեր նկատել այն խորին արհամարհական հայացքը, վոր նա ձգեց Հաջիի վրա: Այն ինչ՝ Հաջին, ավելի ու ավելի մոտենալով, վերջապես, բուրբուրվին կտրեց նրա ճանապարհը:

— Սալամ մեալիքըմ*, — ասաց Ասադը, դսպելով իր հուզմունքը:

Առանց նրա վողջույնին «ալիքիմի սալեամ» պատասխանելու, Հաջին մի քանի քայլ

* Մյուսուլմանների բարե:

հետ դրեց և խրոխտ ճայնով պատասխանեց .

— Վկա յե աստված, յես քեզ ճանապարհ չեմ տալ, մինչև չես յերզվիլ այսուհետև վոտ չդնես այս փողոցները :

Ասադը հեղնորեն ծիծաղեց :

— Յերզվի՛ր, քյա՛Քր, — կրկնեց Հաջին, — այնուհետև ճանապարհը բաց ե և դու մի առնուակ քած :

— Հաջի, — պատասխանեց Ասադը հանդարտ ճայնով, — Ասադն իր կյանքում արյուն չի թափել, չի յել ուղում թափել :

— Արյո՛ւն, — գոչեց Հաջին կատաղած, — դու ի՛նչ մարդ ես, վոր արյուն թափես : Իսեր աստծո, նայեցե՛ք, — շարունակեց նա, յերեսը մի կողմ դարձնելով, չնայելով, վոր փողոցում բացի յերկու հակառակորդներից վոչ վոք չկար, — սարիթորփաղցի մի լկտի յերեխա հանդգնում ե Հաջի-Ալեաքսարի ձեռքից արջիկ խել : Ե՛՛յ, ինքն ալլահն իմ ձեռքից մուլա Սադըղի աղջկան առնել չի կարող, իսկ քեզ պես... շները...

Ասադի արյունը գլխովը տվեց : Բայց նա

տակավին ուժ անցավ զսպելու իր կատաղությունն և ասաց .

— Փաթման նրան կզնա, ում սիրում ե :

— Հա, հա, հա, Փաթման սիրում ե արծաթադործ Ասադին, հա, հա, հա...

— Աստծուն ե հայանի... բավական ե, Հաջի, յերկուսն արդեն ունիս, բավական է, աղահուլթյունը տուն ե քանդում, Հաջի :

— Քառասուն կնիկ ել ունենամ, ելի չեմ թողնիլ, վոր Փաթմային քեզ նման լրբերը տանեն :

Ասադի համբերությունը հատավ : Այլևս նա անկարող եր տանել իր հակառակորդի անվայել հիշոցները :

— Հարա՛մ լինի քո դլխին հաջիությունդ, աննամուս, — գոչեց նա կատաղած :

— Չայտը կտրի՛ր, քյա՛Քր... քեո...

Վերջին քառը չավարտած, Հաջի-Ալեաքսարը մի քայլ ևս յետ դրեց և չուխայի տակից արագությամբ մի ինչ-վար սև բան հանեց : Ասադը մթան մեջ նշմարեց նրա չարագուշակ շարժումը : Նա հարձակվեց Հաջիի

վրա, բունեց նրա թևերից և աշնպես սաստիկ
հրեց, վոր նա, տասը քայլ հեռու մղվելով,
թափալվեց դետնին: Մինչ նրա ուշքի գալը,
մինչ «ոգնեցե՛ք, ոգնեցե՛ք» գոռալով բարձրա-
նալը, Ասաղը վերցրեց դետնից ատրճանակը,
ձեռքից դիմացի տան կտուրն և, քայլերն ուղ-
ղելով դեպի վերև, անհայտացավ խավարի
մեջ:

*** Y

Դարձյալ յերեկո յեր, դարձյալ մուկղիննե-
րը ազան եյին տալիս և քրիստոնյաների զան-
գեքը հրավիրում եյին աստծո տունը հավա-
տացյալներին: Քաղաքի արևմտյան կողմից
վիշոմ եր մի հով դեպի յուռ: Յե՛վ վորքան դու-
րեկան լիներ այդ գեպի յուռը, կարծես, նա
դաբրխատանների*, մեռելների այդ մոռոյ աշ-
խարհից, հիշեցնում եր մահու սոսկալի
ձայնը.

«Մի՛ հպարտանար, ո՛վ ինսան**», վասն զի

* Դերեզմանատուն:

** Մարդ:

բո վերջին ասարտարանը այստեղ է»:

Իսկ ինսանը հպարտանում եր, իմամ լուցի-
ները—նամանավանդ:

Հաջի—Ալեաքպարի բարձրաշեն տան առջև
իմբվել եյին թվով մոտ տասը պարաղլուխ—
յերիտասարդներ: Մեջտեղ կանգնած եր ինքը
Հաջին, ուսերին ձղած դեղնագույն մետաք-
սյա արան և ձեռին բռնած մի յերկայն
կարմրակեղև չիբուխ: Յերիտասարդները,
ձեռները գլխիների վրա դրած, խորին պատ-
կառանքով լսում եյին Հաջիի հետևյալ տրա-
մաբանությունը.

— Ամեն մի մարդ յուր թողի*** պատվի
նախանձախնդիրը պիտի լինի: Մենք, իմամ-
լուցիներս, մեր պապերի պապերից սկսած,
հպարտ և պատխտիսողիք ենք յեղել, այժմ
նամանավանդ պիտի լինենք: Հայտնի յե աստ-
նուն, վոր արյունս յերակներիս մեջ բորբոք-
վում ե, յերբ հիշում եմ այն քյաֆրի տղի
քյաֆրի այս փողոցներն անցնելը: Թքեցեք
Հաջի—Բյարիմի վորդի Հաջի—Ալեաքպարի յե—

*** Արվարձան:

րեսին, վոր նա այն յերեկո լրբի փորը ծխով
չլցրեց: Բայց, ի՞նչ անեմ, անիրավը նապաս-
տակի նման փախավ ձեռքիցս: Յես, բարկա-
ցած, ատրճանակս ձգեցի վտուր: Վերջապես,
անցածն անցել է, «յետեկից արձակողը դարչա-
պարին կխփե», ասում է սուսձը: Այժմ պա-
տիվը ձերն է, սարիթորփաղցի տղայի մեկը
հանդգնում է ձեր թաղի անունը խայտառա-
կել, ձեր պարտքն է նրա վտորը կտրել այստե-
ղից: Վալլա՛հ, բիլլահ, Հաջի չլինեյի, այս
րոպեյիս, մետաքսյա արաս դեն ձգելով, մի
փայտ վերցնելով, մեն միայնակի կգնայի ամ-
բողջ Սարի-Թորփաղի դեմ: Բայց ամոթ է ձեզ
պես յերիտասարգները կանգնած, ինձ չպիտի
թողնեք, վոր միբուքս անպատվեմ: Ճշմա-
րի՞տ եմ ասում:

— Այո, այո՛, Հաջի, ինչ ասել կուզի, վոր
խոտակ ճշմարիտ էք հրամայում, — ասաց խո-
րոված ծախող Հեյրաթը, վորի մի աչքը
դուրս է յեկել Մահառոամի կովի ժամանակ:

— Լսո՞ւմ էք, Չահլինեք, ամո՛թ մեր չիբ
ու շնորքին, — մեջ բերեց Մեյթին, Իմամընի

ամենալավ փայտ խփողներից մեկը:

Թռչնորս Ասկյարը, վոր յերեկելի քար դցող
եր և յերկու մարդու աչք եր հանել, մեկի յել
վտոր գոսացրել, ասաց, թե հետաձգելը յերկ-
չոտություն է, թե հենց այսօր խփ պիտի
թաղակուի սկսել Սարի-Թորփաղի հետ: Այս
միտքը բոլորն ընդունեցին: Բայց Հաջին չեր
չտարում. նա, պարազուրխ յերիտասարգնե-
րին մեկ-մեկ ծխախոտ նվիրելով, ասաց.

— Մի՛ վռաղեք, բոլորովին մի վռաղեք,
այսօր չլինի — վաղը լինի, դանադանություն
չունի: Բայց մի բան վա:

— Հրամայեցե՛ք, Հաջի, հրամայեցե՛ք, —
ասացին միաբերան բոլոր պարազուրխները.
ձեռները կրճքներին դրած, դուրս տալով նո-
րին հաջիության:

— Դիցուք հենց հիմա թաղակուի է, — չա-
րունակեց Հաջին, չիբուկը բերնից հանելով և
միբուքը չիբելով, — իմ կարծիքով, մեր կուիվը
մի կոպեկի արժեք չի ունենալ, յեթե այդ
կուից անլնաս դուրս կգա ինքը, սկզբնապատ-
ճառը:

— Ասածը, — հարցրին միաբերան բոլորը :

— Այո՛, Աստղը, — պատասխանեց Հաջին, — յերդվում եմ Ալիի սուրբ անունով, վոր ձեր սրբազան պարտքն է նրան վոչնչացնել, ինչպէս լինի, վոչնչացնել: Հեյբա՛թ, նախ և առաջ փայտդ նրա գլուխը պիտի ջարդ ու փշուր անի: Ասկյա՛ր, քար ձգելիս, նշանակ պիտի վերցնես նրան, նույնպէս է ձեզանից յուրաքանչյուրը: Լսո՞ւմ եք:

— Բա՛ր չեչմա, քա՛ր չեչմա (աչքիս վրա), — ստացին ամենը մի առ մի, ձեռները դնելով իրենց աչքերի վրա և գլուխ տալով Հաջիին:

— Կեցցե՛ք, ջահիլներ, կեցցե՛ք, դուք իսկական տղամարդիկ եք, — հալանեց Հաջին գոհ սրտով: — Հիմա շնորհ արեք զնանք մեր տուն չայ խմելու: Այնտեղ մենք կխորհրդակցենք կովի մասին:

Պարադուլներն, ամաչելով, քաշքշվելով, միմյանց յերեսին նայելով, հետևեցին Հաջի Ալեաքսարին և մտան նրա տունը:

Առավոտ էր: Սարիթորվաղցի իննը-մասունանի Մահմուդը, իր խանութի առջև կանգնած, Շիրազի պիսակափոր մորթուց կարած մի գդակ էր թրջում և ճիպտով ձեծում: Այդ միջոցին իմամուցի գդակ կարող Մեյթին դիտմամբ անցավ նրա առջևով: Մահմուդն անդիտակցարար միքանի կաթիլ ջուր սրակեց նրա վրա: Մեյթին կանդնեց և բերանից բաց թողեց մի շատ անոխայել հիշոց: Մահմուդը ներողութուն խնդրեց: Մեյթին, վոր յերեկոյան Հաջի-Ալեաքսարին և իր ընկերներին խոսք էր տվել կովի առիթ տալու, մի ավելի սուր հիշոց արտասանեց Մահմուդի յերեսին: Մահմուդը նամուսով մարդ էր, Մեյթին պատասխանեց ըստ կարդին և փոխարենը վերջինից ստացավ մի պինդ ապտակ:

Իմամուցիները պատրաստ էին, մի վայրկյանուս թափվեցին Մահմուդի վրա: Մյուս կողմից յեկան միքանի սարիթորվաղցիներ, և սկսվեց մի թեթև կռիվ: Իսկույն գդակ կա-

րողներէ խանութները փակվեցին: Մեծված, ջարդ ու փշուր յեղած սարէթորփաղցիները շտապեցին իրենց թաղը: Ճանապարհին նրանք անցքը պատմեցին արծաթագործ Ասաղին, վոր կուլի սկզբնուպատճառն եր:

Ասաղը կուլելու տրամադրություն չուներ, բայց պարագլուխ եր, պարտավոր եր միջամտել յուր ընկերներէ վիրավորված պատիվը վերականգնելու համար:

Կայծակի արագությամբ ամբողջ բազարում լուր տարածվեց, թե քաղաքի իմամլու և Սարի-Թորիաղ թաղերը վտարէ յեն կանգնել միմյանց դեմ, տեղի պիտի ունենա կատաղի կուլի: Վոչ միայն կուլող թաղերի բնակիչները, այլ և շատերը մյուս թաղերից կողպեցին իրանց խանութները յեթե վոչ կուլին, դոնն հանդիսին մասնակցելու համար:

Հաջի-Ալեքաբպարը, մեծ փողոցի անկյունում կանգնած, խրախուսում եր յերիտասարդներին, վորոնց թվումն եր և՛ Փաթմայի յեղբայր Հաչիմը: Նախ, իրենց չուխաները հանած և թևերի վրա իրրև վահան փաթա-

թած, յերկու կողմերից ասպարեղ մտան պատանիները: Շատ չանցած՝ մեջ մտան մեծերը, և թաղակուլը սկսվեց:

Քաղաքի միջին շերտը ծածկվեց խուռն ամբոխով: Ներկա եյին և՛ քրիստոնյաները. հեռվում հախաբլած կամ քարձր կտուրների վրա կանգնած, նրանք տկանատես եյին, թե ինչպես յերկու արյունակից և կրօնակից համայնքներ աշխատում են միմյանց արյունը թափել:

Կուլը տեղի ուներ միջին, ամենաընդարձակ փողոցում: Հազարավոր քարեր յերկու կողմից տեղում եյին կուլողներէ գլխին: Բուրբը դինված եյին յերկայն փայտերով, բայց «փայտակուլը» դեռ չի սկսվել, վորովհետև ախոյանները տարալին հեռու եյին միմյանցից: Կոտրատվող ասլակիներէ զրնգոցը, վտոների տրոփյունը, կանանց և մանուկներէ ճիչը, ջահիլներէ վայրենի աղաղակները քանի գնում սատկանում եյին և ահուելի դառնում:

Մի քանի պոլեցիականներ միջամտեցին,

վոր կովոզներին բաժանեն, բայց, փայտի մի-
բանի հարվածներ ստանալով, յետ մղվեցան և
փախան, մտան հանդիսականների մեջ: Անդոր
անցավ և՛ աղսախկաղների (ծերունիների)
խրատն ու սպառնալիքը:

Թուչնորս Ասկյարն իր զնդակի նման ար-
ձակած քարերով արդեն յերկուսի կուռը թու-
լացրել էր և փայտը ձեռից դեցել:

Սորոված ծախող Հեյբաթը կատաղի գո-
ուում էր, փայտը դարկելով գեանին, չուխա-
վահանը բարձրացնելով և վեր ու վայր թռչ-
կոտելով:

Հանկարծ Իմամլուն թնդաց, գոգակ վարող
Մեյթին, Շիրաղի փափախը աչքերին քաշելով,
կարկտի պես թափվող քարերի տակ վազեց ա-
ռաջ: Նրան հետևեցին Հեյբաթն ու Փաթմայի
յեղբայր Հաշիմը: Հակառակ կողմից, ամելի
կատաղի գոռալով, վազեց ընդատաջ գոգակ
կարող Մահմուդը, վոր Մեյթիից ապտակ էր
ստացել:

Փայտի կռիվը սկսվեց:

Ողբ մեջ Փոփոում էր մի կարմիր աստա-

ուով չուխա: Ամենի հայացքները հառված էյին
նրա վրա, ամենի ուշադրության կենտրոնը
նա յեր: Նա գուռում էր առյուծի պես, և նրա
ձայնի դղրդոցը տարածվում էր հեռու ու հե-
ուու:

Իմամլուն գրոհ տվեց, Սարի-Թորփաղը
յետ մղվեց: Ընկան միքանի վիրավորվածներ:
Կանանց ճիչը սաստկացավ. մայրերը վողբում
էյին, հայրերը անխիճում իրենց փուչ զավակ-
ներին: Թիֆայն էր:

Յեվ այս բոլորն ինչո՞ւ:—Մի աղջկա հա-
մար: Բայց ո՞ւր էր նա, ի՞նչ էր անում այդ
սարսափելի բոսային:

Ահմադ աղայի բաղնիսի կտրում հավաք-
ված էյին մի խումբ կանայք և, զմբեթների
յետևում կուչ յեկած, ղիտում էյին կռիվը:
Ամենից առաջ, կտուրի ծայրում, աներկյուղ,
համարձակ կանգնած էր Փաթման, այո՛, ին-
քը Փաթման: Ախ, լավ է, վոր մայրերը չգի-
տեյին, թե նա յե կռվի բուն պատճառը, յեթե
վոչ պատառ-պատառ կանեյին նրան իրենց սի-
րեցյալ վորդիների համար: Աշխատում էյին

Փաթմային յետ քաշել, չեյին կարողանում : Յեւ ո՞վ կարող էր, քանի վոր անհաղթելի դորուժյամբ նրա ուշք ու միտքը, հողին ու սիրտը բեհոված եյին մի կետի վրա . . կարմիր-չուխան :

Ահա ամենը վախան, ասպարեզ բացվեց և մեն մենակ մնաց կարմիր-չուխան : Իմամլուները սրընթալով վաղեցին դեպի նա, ամենից առաջ Հեյրաթը, Մեյթին ու Հաշիմը : Արդւոք, կրիսիչի՞ կարմիր-չուխան, թե՞ կղեմանա միայնակ այդ կատաղած ամբոխին . արդւոք, Հաշիմը կենդանի դուրս կզա՞ այդ կոսից : Ինչո՞ւ Փաթմայի յեղբայրն էլ և մասնակցում, յեթե նա չլիներ, այն ժամանակ թող բոլոր իմամլուցիները կոտորվեյին և մասաղ դառնային կարմիր-չուխայի մի մասի :

Մինչ գեղեցիկ Փաթման տանջվում էր այս մտքերից, կռիվը սաստկանում էր ու սաստկանում : Սարիթորիաղցիները, ողնուժյուն ստանալով, հարյուրավոր բազմությամբ վազում էին առաջ : Հեյրաթը, Մեյթին և Հա-

շիմը շրջապատեցին կարմիր չուխային : Փաթման ահամա ճչաց, բոպեն վտանգավոր էր : Նա տեսնում էր, թե ինչպես իր յեղբայրը, Հաշիմը վայտի հարվածներ և տալիս կարմիր չուխայավորի զլխին : Մյուս կողմից խիւժ հեյին Հեյրաթն և Մեյթին : Փաթման նկատեց, վոր կարմիր չուխան ուշադրություն չի դարձնում Հաշիմի վրա և միայն սլատասխանում և մյուս յերկու արտյանների հարվածներին : Անչուչա նա խնայում և Հաշիմին : Փաթմայի սիրտը թռթռաց . այսպիսի վեհանձնություն միայն Ասաղը կարող է տենեսալ, ուրիշ վոչ վոք :

Մեյթիի ձեռից վայտը վայր ընկալ և նա ինքը վովեց Ասաղի վտանքի տակ . նույն վիճակին արժանացալ և : Հեյրաթը : Կեցցե՛ կարմիր չուխան : Նույն վայրկյանին Ասաղի ճակատում վայրեց մի կարմիր զլծ, վոր, վայր իջնելով, արագ-արագ ծածկեց նրա ամբողջ յերեսն ու կուրծքը : Իս թուչնորս Ասկարի քարի հետքն էր : Փաթմայի վրտները թուլացան : Բայց ահա Ասաղը մի քիչ տա-

Պատժմային յետ քաշել, չեյին կարողանում : Յեւ մ'ի վարող եր, քանի վոր անհատութիւն զորությամբ նրա ուշք ու միտքը, հոգին ու սիրտը բեկտուած եյին մի կետի վրա . . կարմիր-չուխան :

Ահա ամենը վախան, ասպարեղ բացվեց և մեն մենակ մնաց կարմիր-չուխան : Իմամլուները սրընթալով վաղեցին դեպի նա, ամենից առաջ Հեյրաթը, Մեյթին ու Հաշիմը : Արդեյք, Կսիախչի՞ կարմիր-չուխան, թե՞ կլիմանա միայնակ այդ կատաղած ամբոխին . արդեյք, Հաշիմը կենդանի դուրս կըս՞ այդ կովից : Ինչո՞ւ Պատժմայի յեղբայրն ել ե մասնակցում, յեթե նա չլիներ, այն ժամանակ թող բոլոր իմամլուցիները կտատրվէյին և մասաղ դառնային կարմիր-չուխայի մի մաղին :

Մինչ գեղեցիկ Պատժման տանջվում եր այս մտքերից, կռիվը սաստկանում եր ու սաստկանում : Սարիթորփաղցիները, ողնություն ստանալով, հարյուրավոր բազմությամբ վագում եյին առաջ : Հեյրաթը, Մեյթին և Հա-

շիմը շրջապատեցին կարմիր չուխային : Պատժման ահամա ճչաց, բոսկեն վտանգավոր եր : Նա տեսնում եր, թե ինչպես իր յեղբայրը, Հաշիմը վայտի հարվածներ ե տալիս կարմիր չուխայավորի գլխին : Մյուս կողմից խիւժ եյին Հեյրաթն և Մեյթին : Պատժման նկատեց, վոր կարմիր չուխան ուշադրություն չի դարձնում Հաշիմի վրա և միայն պատասխանում ե մյուս յերկու ախոյանների հարվածներին : Անշուշտ նա խնայում ե Հաշիմին : Պատժմայի սիրտը թռթռաց . այսպիսի վեհանձնություն միայն Աստղը կարող ե ունենալ, ուրիշ վոչ վոք :

Մեյթիի ձեռից վայտը վայր ընկալ և նա ինքը վուվեց Աստղի վտանքի տակ . նույն վիճակին արժանացալ և : Հեյրաթը : Կեցցե՛ կարմիր չուխան : Նույն վայրկյանին Աստղի ձախատում փայլեց մի կարմիր գիծ, վոր, վայր իջնելով, արագ-արագ ծածկեց նրա ամբողջ յերեսն ու կուրծքը : Իս թռչնորս Ասկյարի քարի հետքն եր : Պատժմայի վրտները թուլացան : Բայց ահա Աստղը մի քիչ տա-

տանկելուց հետո, գրպանից հանեց մի սպիտակ բան, փաթաթեց ճակատին և արյունաշաղախ յերեսով, ալեկի կատաղի գորությամբ թոսով առաջ:

Իմամըուն փախավ: Ճաթման բնադղմամբ հետ նայեց. բաղնիսի կրտուրը դատարկվել էր, կանաչք փախել էյին: Նա մտիկ արեց ներքև. սարիթորփաղցիները մոտենում էյին ու մոտենում: Ասադի փայտը վորին ղիպչում էր՝ նա թալալովում էր գետին: Հանկարծ նա չքացավ: Ճաթմայի աչքերը մթնեցին. սպանեցին, արդյոք, նրան: Նա բարձր ձայնով ողնություն կանչեց և նստեց կտուրի ծայրում:

Մի քանի մարդիկ փողոցից մի յերկայն սանդուխտ դրեցին բաղնիսի պատին: Ճաթման տեսավ, վոր ներքևից Հաջի-Ալեաքապարի ծառաները բարձրանում են վերև: Նրանք արդեն հասել էյին սանդխտի ծայրին և աղաչում էյին Ճաթմային, վոր մոտենա, բայց նույն վայրկյանին սանդուխտը նրանց փոսների տակ դողաց և ճոճուարով ընկավ փողոց, իր հետ տանելով Հաջիի ծառաներին:

Այդ պահին Ճաթման դղաց, վոր յետևից յերկու ձեռներ զրկեցին իրան: Ինչպես հանկարծակի վորսված մի ճնճողուկ, նա մի վայրկյան ճիզն արեց դուրս պրծնելու յերկաթե ունելիքի պես ամուր սեղմած ձեռներից: Սակայն ուժերը դավաճանեցին նրան, և նա, թուլացած, անձնատուր յեղավ անհայտ ձեռների գորությանը...



Յեթե վոչ վոստիկանությունն և աղասիկալները դոնե բնությունը կարողացավ կուլին ընդհատել: Վրա հասավ իրիկնային մութը, ջահիլների կատաղությունը շիջավ: Փոքր աս փոքր կուլին անմասնակից հանդիսականների բազմությունը ցրվեց, կախողները հողնած ջարդուկչուր յեղած, հետ քաշվեցին:

Հաղթող հանդիսացավ Սարի-Թորփաղը, բայց Իմամըուն պարծենում էր արծաթագործ Ասադի կուլի ասպարիզից անհայտանալու լուրով: Յերկու կողմից վիրավորվել էյին քսա-
3 - 887

տանկելուց հետո, գրպանից հանեց մի սպիտակ բան, փաթաթեց ճակատին և արյունաշաղախ յերեսով, ամելի կատաղի զորությամբ թռավ առաջ:

Իմամլուն փախավ: Փաթման բնագրամածը հետ նայեց. բաղնիսի կտուրը դատարկվել էր, կանաչք փախել էյին: Նա մտիկ արեց ներքև. սարիթորփաղցիները մոտենում էյին ու մոտենում: Ասաղի փայտը վորին ղիպչում էր՝ նա թավալվում էր դետին: Հանկարծ նա ջրացավ: Փաթմայի աչքերը մթնեցին. սպանեցի՞ն, արդյոք, նրան: Նա բարձր ձայնով ողնություն կանչեց և նստեց կտուրի ծայրում:

Մի քանի մարդիկ փողոցից մի յերկայն սանդուխտ դրեցին բաղնիսի սրտին: Փաթման տեսավ, վոր ներքևից Հաջի-Ալեաքպարի ծառաները բարձրանում են վերև: Նրանք արդեն հասել էյին սանդխտի ծայրին և աղաչում էյին Փաթմային, վոր մոտենա, բայց նույն վայրկյանին սանդուխտը նրանց վտաների տակ զողաց և ճռճալով ընկավ փողոց, իր հետ տանելով Հաջիի ծառաներին:

Այդ սրահին Փաթման զղաց, վոր յետևից յերկու ձեռներ դրկեցին իրան: Ինչպես հանկարծակի վորսված մի ճնճղուկ, նա մի վայրկյան ձիղն արեց դուրս պրծնելու յերկաթե ունելիքի պես ամուր սեղմած ձեռներից: Սակայն ուժերը զսլաճանեցին նրան, և նա, թուլացած, անձնատուր յեղավ անհայտ ձեռների զորությանը...

Յեթե վոչ վոստիկանությունն և աղսախկանները, դոնե բնությունը կարողացավ կռիվն ընդհատել: Վրա հասավ իրիկնային մուխը, ջահիլների կատաղությունը շիջավ: Փոքր աս փոքր կռիվն անմասնակից հանդիսականների բազմությունը ցրվեց, կավոզները հողնած ջարդուհիշուր յեղած, հետ քաշվեցին:

Հաղթող հանդիսացավ Սարի-Թորփաղը, բայց Իմամլուն պարծենում էր արծաթազործ Ասաղի կռիի ասպարիղից անհայտանալու լուրով: Յերկու կողմից վիրավորվել էյին քառ-
3-887

նուհինգ մարդ, վորոնցից յերեքի դրությունն անհուսալի յեր:

Ձահիլները, խումբ-խումբ փողոցների անկյուններում հավաքված, միմյանց հաղորդում էին կովի մանրամասնությունները: Հաջի Ալեաքսարին հավատացրին, թե արծաթագործ Ասաղը սպանվել է կամ դոնն վիրավորվել: Հաջին հրամայեց Ձահիլներին շարքաթ բաժանել:

Մինչ նրանք խմում էին շաքարխառն ըմպելիքը, մուլա-Ղանիի տնից լսվեց հուսահատ աղաղակների ձայն, և մի կին, մաղբըրը փետտելով, վոտաբաց, դլխաբաց վազեց փողոց:

Դա Փաթմայի մայրն էր:

— Մարդի՛կ, աղջիկս չկա, մարդի՛կ, աղջըկաս փախցրել են,—գուտամ էր խեղճ Ձեյնաբը, վողբալով յուր զեղեցիկ դստեր կրուսառը:

Այժմ միայն պարզվեց կովի ասպարիլից Ասաղի անհայտանալու պատճառը: Ուրիշ ո՞վ

կարող էր Փաթմային փախցնել, յեթե վոչ նա:

Իմամուլցիները գլխին սառը ջուր մաղվեց, ամենքն ամոթից չիմացան ուր թաղցնեն իրանց դրուխը:

Իսկույն Ձահիլները միջից քսանի չափ կամալորներ առաջ յեկան, խոստացան անպատճառ գտնել Փաթմային և տուն բերել: Բայց դրա համար նախ անհրաժեշտ էր մուտք ունենալ Սարի-Թորիաղ:

Մի քանի աղսախիւղներ զնացին և թչնամի բանակի աղսախիւղների հետ ժամանակավոր հաշտության դաշն կապեցին, վոր հակառակորդները իրավունք ունենան անարգել անցնել միմյանց փողոցները:

Մեծ պետությունների պատերազմն յուր կանոններն ունե, թուրքերի թաղակոխին էլ ունե յուր կանոնները, չդրված, այլ պապերից ավանդորեն հարգված և պահպանված: Թչնամությունը, նրանց մեջ դործով յերևան է դալիս միայն կովի ասպարիլում, խաղաղության և զինադուլի ժամանակ հակառակորդները

գեթ արտաքուստ հարգում են միմյանց :

Սահայն վորոնող ջահիլները Ֆաթմային Սասաղի տանը չգտան և վոչ ել իրան, Սասաղին : Վորտեղ եյին նրանք—իմացողները չասացին, չիմացողները ուրախացան, լսելով իրանց պարագլխի նոր հերոսութունը : Իմամ-լուցիներին պատիվը պահանջում եր, ինչպես և իցե, այն գիշեր և յեթ գտնել Ֆաթմային :

— Ով ինձ սիրում ե, թող հետևի ինձ, — գոչեց գունաթափված Հաշիմը :

Նա խիղճը վաղեց տուն, իր ձին թամքեց, դեցե ուսովը հրացանը, կտպեց մեջքին ատըր-ճանախն ու խանչալը և դուրս յեկավ : Քսան կամավորներեց նրան հետևեցին միայն տասնուչորսը :

— Աղա, գուք ել գնացե՛ք, — հրամայեց Հաշի-Սլեաքպարը յուր յերկու սևամորթ ծառաներին :

Նրանք վոստոստալով վաղեցին տուն, մի մի ահագին վիայտ վերցրին՝ կոլորակ, գնդականման, բևեռոտ ծայրերով և մտան կամավորների շարքը : Խումբը բաժանվեց յերկու

մասի. մեկին պիտի առաջնորդեր Հաշիմը, մյուսին ղումարբազ* Հասանը : Վերջինը քաղաքի բոլոր խուլ ու մթին անկյունները լավ ուսումնասիրած եր, քսան տարի շարունակ «յերեք-վեզ» (ուչ-աչդ) ասված խաղը խաղալով քաղաքի բոլոր սրիկաների հետ :

Ամեն ինչ պատրաստ եր : Ղումարբազ Հասանն իր խումբն առաջնորդեց քաղաքի դեպի ստորին մասը—Սեարդարի այգու կողմը, իսկ Հաշիմը համոզված եր, վոր Սասաղը Ֆաթմային տարել և կամ խաների գմբեթաչեն շիրիմների կողմը կամ թթենիների այգիները :

Ամբողջ գիշերը իմամու թաղում տիրում եր խուլ աղմուկ : Ծառերն անքուն նստեցին փողոցում, իրանց տան դռների առջև, վոր տեսնեն՝ ջահիլների արշավանքն ինչ յեղ կուենա :

Անքուն եր և՛ Հաշի-Սլեաքպարը : Յեվ նրա անքնութունը միայն մի պատճառ ուներ. նրա պատիվը և անունը չարաչար վիրավորված

* Խաղորդ. խաղամոր, игрок.

եյին. նա ամբողջ թաղի դժգոհութեան և խուլ արտունջների առարկան եր դարձել: Գործի եյութեանն ամենին հայտնվել եր, ամենը գիտեցին, վոր կոխվ հորդորողը նա յե յեղել և ինչից զբողված:

— Անե՛ծք քեզ, չար Սաթայել, անե՛ծք քեզ, չար Սաթայել: Լահ իլլահ իլլալլահ, Մահամադի Ռասուլ Ալլահ, — կրկնում եր նա անդադար, հուզված անցուղարձ անելով իր տան պատշգամբի վրա:

Հաջիի սալադ կինը, Գյուլնիզարը, ամուսնուց թուլտվութեան ստացած, գնացել եր յուր ծնողների մոտ գիշերելու: Նա սառնարյուն չեր կարող այդ գիշեր մի հարկի տակ մնալ այն մարդու հետ, վոր, յերկրորդը բազմական չհամարելով, ուղում եր յերբորդին ևս բերել և այն ել այդպիսի խայտառակութեամբ:

Կես գիշերից անց լուր տարածվեց, թե Փաթմային գտել են և բերում են: Արթունաները քնածներին ևս արթնացրին, և ամենը, դուրս թափվելով, դիմեցին մոլլա Ղանիի

տան կողմը: Լուրը սուտ եր: Վերադարձել եր ղումարթազ Հասանն յուր խմբով և պատմում եր, թե քաղաքի ստորին կիսի բոլոր անկյունները պտտել ե, Ասադի և Փաթմայի հետքն ել չկա:

Հաջիմի խումբը դեռ չեր վերադարձել: Նրա մայրն ընկալվ Հասանի վտաններին, աղերսեց, վոր սա յուր խմբով ոգնութեան հասնի յուր վորդուն: Ջահիլներից մի քանիսը, սաստիկ հոգնած լինելով, դնացին քնեու: Նրանց փոխարեն դուրս յեկան ուրիշ կամալորներ, և Հասանը ուղեկիցների մեկ ու կես անգամ սվելի թվով արչավեց վերին կողմը:



Վաղուց Ասադի գլխում միտք եր ծագել Փաթմային փախցնելու, յեթե խաղաղ միջոցով ձեռք բերելը չհաջողվեր: Անտահկալ կոխվը խորտակեց նրա վեղջին հույսը. նա դիտեր, վոր կովից հետո այլևս անկարելի յեր սպասել, վոր Փաթմայի մայրն ու յեղբայրն և

մանավանդ Հաջի-Ալեաքսարը, վորևե զեջն-
ղուեթյուն անեն:

Ուրեմն պետք եր դիմել ծայրահեղ միջն-
ցի: Հենց վոր կռիվը սկսվեց, Ասաղը թամբեց
յուր նոսրիքն և վերցրեց յերկրի ող հրացանը,
դարարինա—ասորճանակը և դաղստանցի Թեյ-
մուրի շինած «յափունջի կիսող» խանչալը:
Այս բոլորը նա հանձնեց զիժ Բեանդալիին և,
մի մանեթ բաշխելով, պատվիրեց, վոր հեռ-
վեց հեռու հետևե նրան կռվի ժամանակ:

— Յեթե հարցնող լինի, վոչինչ չպատաս-
խանես, զիտե՞ս,—հրամայեց նա զիժ Բեան-
դալիին, վոր իսկապես պատասխանելու ըն-
դունակուեթյուն ել չուներ:

Յուր հանդուգն մտադրուեթյունը նա հայտ-
նեց ամենամոտիկ ընկերներին և խնդրեց, վոր
ողնեն ձեռնարկուեթյանը:

— Ուրախուեթյամբ կյանքներս կտանք,—
ասացին հավատարիմ ընկերները, գովելով Ա-
սաղի հերոսուեթյունը:

— Դուք միայն կռվի ժամանակ,—պատվի-
րեց Ասաղը,—աչք քցեցեք կտուրներին և Ֆաթ-

մային ցույց տվեք ինձ: Մնացյալն իմ գործն
ե: Դուք ճանաչո՞ւմ եք, տեսե՞լ եք նրան զրոջ
տունը գալիս: Նա անպատճառ դրսու՞մ կլի-
նի...

Այս սրայմանադրուեթյունից հետո, Ասաղը
թուով կռվի ասպարեղը: Նա ինքն ամենից ա-
ռաջ տեսավ Ֆաթմային: Հենց վոր սարիթոր-
փաղցինները զրոհ տվեցին, հենց վոր Մեյթին
ու Հեյբաթը հաղթվեցին, նա, կռիվը տարած
համարելով, վաղեջ Ահմադ աղայի բաղնիսի
յետևը, դտավ ճանապարհն և բարձրացավ
կտուր: Նա հրեց և ձգեց մի կտուրից մյուս
կտուր ընդդիմադրող բաղնիսպանին, վաղեց
և... զիտենք ինչ արավ:

Որն արդեն մթնել եր, յերբ Ասաղը, յուր
թանկագին կողոպուտը ձիու վրա դրած, հա-
սավ սարի թորփաղցի Հաջի-Բախիշի աչքին:

Այդեպան քեաբլահի Աբդուլլան շատ չար
ու բարի տեսած, կյանքի բովով անցած մի
փորձառու ծերունի յեր: Նա ճանաչում եր
Ասաղին և միշտ տեսնելիս մտաբերում եր նրո

հորը, վորի հետ եր անցուցել յուր փոթորկալից յերիտասարդությունը:

— Տղա, այդ ի՞նչ է,—հարցրեց նա զարմացած, տեսնելով Ասաղին յերեսն արյունոտ, գլուխը փաթաթած և դրկում մի անչնչացած աղջիկ բռնած:

Ասաղը համառոտ պատմեց յեղելությունը, հինավուրց «խզիթը» (քաջը) հրավիրեց նրան իջնել ձիուց ու յուր թանկադին կողոպուտի հետ թաղնվել նրա խրճիթում:

Մինչ այդպանի ջուր բերելը, Փաթման ուշքի յեկավ, սթափվեց, աչքերը բաց արեց և կրծքից արձակեց մի խորին հառաչանք:

— Յես եմ, Փաթմա, մի՛ վախենար,— խրախուսեց Ասաղը մեղմ և քնքուշ յեղանակով, վորքան թույլ եր աալիս նրա կոշտ ձայնը:

Փաթման սարսափած վոտքի կանգնեց և դողդղված մազերով, դունաթափ, ձեռները գլխին խփելով, բացականչեց.

— Վա՛յ մայր, վա՛յ յեղբայր...

Նա վաղեց դեպի դուրս: Ասաղը հառաջեց նրան և ձեռներից բռնեց:

— Ի դուր մի՛ տանջիր ինքդ քեզ. մայրդ ել կենդանի յե, յեղբայրդ ել, քույրերդ ել:

— Ինչո՞ւ յես ինձ բերել այստեղ,—գոչեց Փաթման:

Ինչո՞ւ, մի՞թե Փաթման չգիտե ինչու, մի՞թե կարծում եր, վոր Ասաղը թույլ կտար նրան ուրիշի կին դառնալու, մի՞թե...

Փաթման փոքր առ փոքր հանգստացավ և սկսեց անխոս մնալ: Իսկապես նրա հոստահատ աղաղակները կլիտով չափ արվեստական եյին: Նա հողով ուրախ եր կատարված անցքին. նրա յերեակայությունը վաղուց ստեղծել եր մի այդպիսի հերոսություն Ասաղի կողմից, և նա ցանկանում եր իրազորված տեսնել յուր յերեակայածը: Միայն ձերունի այդպանի ներկայությունը զիղեց նրան մի փոքր աղմուկ բարձրացնել, վորպեսզի պատկառելի քնաբլբազին չկարծե, թե յերիտասարդ մյուսուսումանուհին զուրկ և ամոթխածությունից:

Այսպես ե Շիրվանի թրքուհու բնավորու-
թյունը :

Այդեպանը նրանց համար ընթրիք պատ-
րաստեց,—հաց, պանիր, խաղող և կանաչե-
ղեն : Ամբողջ օրը թե՛ Փաթման և թե Ասաղն
անոթի եյին անցուցել, ուստի այդեպանի հա-
մեստ իրիկնահացը նրանց համար Որուջ-բայ-
րամի «կաթնով փլավից» համեղ եր :

Փոքրիկ խրճիթը լուսավորված եր հնադար-
յան չիրաղի (ճրագի) աղոտ լուսով : Ծերնե-
նի քեաղբրահին աշխատում եր յուր հյուրերին
դվարճացնել, պատմելով որվա յեղելությանը
համանման դեպքեր յուր կյանքից : Ասաղը
սպրդնած եր : Գլխի վերքը սաստիկ ցավ եր
պատճառում, քայց նա աշխատում եր զսպել
իրան, թեև մեծ դժվարությամբ :

— Տղա՛, ինչո՞ւ չթունքներդ դողդողում
են,—հարցրեց այդեպանը,—չլինի վերքդ նե-
ղացնում ե քեզ : Սպասի՛ր, սպասի՛ր, թաշկի-
նակի տակից արյուն ե հոսում : Պետք ե դեղ
դնել, վոր դադարի :

Այս ասելով, ծերունին խսուցն յուր հնա-

մաշ արխալուղի աստառից իր կտոր պատռեց,
վառեց ճրագի բոցի վրա և ձգեց դեանին :
Յերբ կտորը բոլորովին այրվեց, նա սև մու-
րը հալաքեց, սախեց Ասաղին քաց անել ճա-
կատն և մուրը թաշկինակով կապեց վերքի
վրա :

Արյունն արդարև դադարեց :

Այս գործողության ժամանակ Փաթման
ոգնում եր ծերունուն, անդադար պոտովելով
վիրավորյալի շուրջը :

— Այժմ քնիր,—ասաց այդեպանը հայրա-
կան խնամքով,—ինչ վերաբերում ե ապագա-
յին—վաղը կմտածենք : «Յերեկոյան բարիքից
առավոտյան չարիքը լավ ե» ասում ե մեր
պապերի խոսքը :

Գիշերը խաղաղ եր, մուգ-կապտագույն
յերկնքում պայծառ փայլում եյին աստղերը,
հեռվից ժամանակ-ժամանակ լավում եյին քա-
ղաքային գիշերապահների աղաղակները : Նը-
րանց ձայնակցում եյին Սարի-Թորփաղի չնե-
րը, դունչերը դեպի յերկինք բարձրացրած,
աստղերի վրա պոռալով : Ծերունի այդեպանը,

անահալատուեթյունից դրդված, վճռեց արթուն մնալ և ամբողջ գերեզ դրսից խրճիթը պահպանել: Հների սրտալը վատ բան եր գուշակում:

Փաթման, շորերը հագին, Ասաղը չուխայն մեջ փաթաթված, քնած եր խրճիթի մի անկյունում:

Մյուս անկյունում, աշխատանի անկողնում պառկած եր Ասաղը: Մի ձեռը հենած հրացանի վրա, մյուս ձեռը գլխատակին դրած, նա վոչ քնած եր, վոչ արթուն, այլ մի տեսակ թմրած դրուեթյան մեջ եր: Նրա վերքը դարձյալ ցալում եր և ցալում եր ափելի սաստիկ: Բայց նա աշխատում եր վոչ հառաչել և վոչ տնքալ Փաթմային չղարթեցնելու համար: Նրա գլխում սրտսրտում ելին ցերեկվա անցքերը: Մերթ նա յերևակայում եր իրան կռալի ասպարիզում, աջ ու ձախ չըջապատված թշնամիներից, անձրևի նման տեղացող քարերի տակ, մերթ բաղնիսի կտրում, Փաթմային հափշտակելիս և մերթ ձիու վրա, յուր

կողտուտը դրկած, ասղած ամբոխի միջով արշավելիս:

Հետո նա սկսեց խորհել ներկայի և ապագայի մասին: Ի՞նչ պիտի անե նա վաղը, այդ պահանի խրճիթում յերկար թաղնվել տնկարելի յե, անշուշտ իմամուցինները հանդիստ չեն մնալու, անշուշտ նրանք ամեն ջանք դործ կզենեն Փաթմային դտնելու, վոր Ասաղի արյունի զնով իրենց թաղի պատիվը վերականգնեն:

Նա մտքում վճռեց ըլտաբացին վերցնել Փաթմային, գնալ մոտակա թուրք դյուզբերից մինը, այնտեղ մի մոլլա գտնել և քեարին անել (պսակվել):

Շուտով նրա ամբողջ մարմինը սկսեց դողալ: Նրա ատամներն ակամա զարնվում ելին միմյանց, նա ցուրտ եր դդում: Յուրտն անցալ, և նրա մարմնին տիրեց թմրեցուցիչ տաքուեթյուն: Նրա միտքը պղտորվեց. նա քնեց կամ, ուղիղն ասած, սկսեց գառանցել: Ահա Փաթման, գլխաբաց, վոտաբաց, ձի յե նստում, Ասաղին ևս հրամայում ե նստել:

Նրանք արշավում են հեռու ու հեռու, անծանոթ տեղեր: Մի ամայի դաշտում, գետնից, յերկայն և ձյունի պես ձերմակ մերուքով մի մարդ է դուրս գալիս, մտռենում է, յուր ձեռում բռնած մի կարճ, սև փայտով խիում նրանց ուսին: Փաթման և Ասաղը մի ակընթարթում տեղափոխվում են մի փառաշեն տուն: Այստեղ սկսվում է նրանց հարսանիքը: Հյուրերը զվարճանում են, յերաժիշտները նվագում են, պարիչները պարում են, ծառաները շարբաթ են բաժանում:

Այդ միջոցին ներս է մտնում մի վրասիկան, հետո յերկրորդը, և բոլոր բարեկամ հյուրերը դառնում են թշնամի խմամլուցիներ: Փաթմային հափշտակում են, Ասաղի վրտներն ու ձեռները կապում են, յերեսը դեպի յետ դնում են մի ավանակի վրա և յերեսին մուր քսում: Նրան տանում են խմամլու: Թշնամիները, շրջապատելով, քարեր են արձակում նրա վրա, ծաղրում են, շփայնում, թքում են յերեսին: Մոտենում է Փաթմայի յեղբայր Հաչիմը, հետո գլխակ կարող Մեյթին և մի-

քանի աստակ են տալիս: Ոհ, ասրտափելի անպատվութուն, ա'խ, յեթե նրա ձեռները բաց լինեյին, բոլորի պատասխանը կտար: Բայց ահա վրասիկանապետը խփում է նրա ուսին մտրակով, խփում է մեկ, յերկու, յերեք անգամ...

Ասաղն աչքերը բաց է անում...

Խրճիթը տակավին մուխն է, բայց դռներից յերևում է, վոր արևելքը շառադունել է: Ծանրացած գլուխը մի կերպ բարձրացնելով, Ասաղն իր դեմ ու դեմ տեսնում է մի մարդ:

— Ո՞վ ես դու, — հարցնում է նա:

— Շտապի'ր, տղա, վե'ր կաց, գալիս են, — պատասխանում է մի ծանոթ ձայն:

Ասաղը վրտքի յե թուչում հրացանը ձեռին, վազում է խրճիթի մյուս անկյունը և տեսնում է, վոր Փաթման դեռ քնած է:

— Ո՞վ է գալիս, — հարցնում է նա:

Ծերունի աղետանը նրա ձեռից բռնում է և խրճիթի դռների մոտ տանում: Առավոտյան

Նրանք արշավում են հեռու ու հեռու, անծանոթ տեղեր: Մի ամայի դաշտում, գետնից, յերկայն և ձյունի պես ձերմակ միրուքով մի մարդ է դուրս դալիս, մտռնում է, յուր ձեռում բռնած մի կարճ, սև փայտով խիում նրանց ուսին: Փաթման և Ասաղը մի ակընթարթում տեղափոխվում են մի փառաշեն տուն: Այստեղ սկսվում է նրանց հարսանիքը: Հյուրերը զվարճանում են, յերաժիշտները նվագում են, պարիչները պարում են, ծառաները շարբաթ են բաժանում:

Այդ միջոցին ներս է մտնում մի վոսաիկան, հետո յերկրորդը, և բոլոր բարեկամ հյուրերը դառնում են թշնամի իմամուցիներ: Փաթմային հախշտակում են, Ասաղի վոտներն ու ձեռները կսպում են, յերեսը դեպի յետ դնում են մի ավանակի վրա և յերեսին մուր քսում: Նրան տանում են իմամու: Թշնամիները, շրջապատելով, քարեր են արձակում նրա վրա, ծաղրում են, շփացնում, թքում են յերեսին: Մոտենում է Փաթմայի յեղբայր Հաչիմը, հետո զգակ կարող Մեյթին և մի-

քանի ապտակ են տալիս: Ոհ, սարսափելի սնպատվութուն, ախ, յեթե նրա ձեռները բաց լինեյին, բոլորի պատասխանը կտար: Բայց ահա վոսաիկանապետը խփում է նրա ուսին մտրակով, խփում է մեկ, յերկու, յերեք անգամ...

Ասաղն աչքերը բաց է անում...

Սրճիթը տակավին մուժն է, բայց դռներից յերևում է, վոր արևելքը շառաղունել է: Ծանրացած գլուխը մի կերպ բարձրացնելով, Ասաղն իր դեմ ու դեմ տեսնում է մի մարդ:

— Ո՞վ ես դու, — հարցնում է նա:

— Շտապի՛ր, տղա, վե՛ր կաց, դալիս են, — պատասխանում է մի ծանոթ՝ ձայն:

Ասաղը վոտքի յե թռչում հրացանը ձեռին, վազում է յսրճիթի մյուս անկյունը և տեսնում է, վոր Փաթման դեռ քնած է:

— Ո՞վ է դալիս, — հարցնում է նա:

Ծերունի աղբեպանը նրա ձեռից բռնում է և յսրճիթի դռների մոտ տանում: Առավոտյան

աղոս լուսով Ասաղը հետևում, այդու գրեթե մյուս ծայրում նկատում է ինչ-վոր մարդիկ, լսում է ինչ-վոր խուլ սպառնալիքներ: Մարդիկ ավելի ու ավելի մոտենում են, ճայներն ավելի ու ավելի պարզ են լսվում: Ահա ծառերի բների հետևից փոքր առ փոքր վորոշվում են յեկողների դեմքերը. մի մասը ձխավոր է, մյուս մասը հետևակ, բոլորն ել թըրքեր և իմամլուցիներ: Մեկը վոտով շտապում է ամենից առաջ:

Ասաղը ճանաչում է Հաչիմին:

Մի ակնթարթում նա թռչում է ներս, հավաքում է մտացյալ զենքերն և, Յաթմային քնած թողնելով, դուրս է գալիս. խրճիթը կողպում է, թիկն է տալիս դռներին և կանգնած՝ սպասում է յեկողներին: Փախչել և Յաթմային փախցնել անկարելի յե. թշնամիները մոտիկ են, պետք է պաշտպանվել: Բայց վո՞ր մեկի դեմ պաշտպանվել. նրանք մոտ տասնուհինգ հոգի յեն, խսկ Ասաղը միայն մի ծերունի ողնական ունի, վորի միակ զենքը հիսնամյա ժանգոտված խանչալն է: Փուլթ

չե, թող գան, վոչ վոք չի կարող Ասաղի ձեռքից Յաթմային խլել, քանի նրա շունչը բերնումն է:

Վերջապես, իմամլուցիները դուրս յեկան ծառերի յետևից և կանգ առեցին, խրճիթի դեմ ու դեմ կրաաշրջան կաղմելով: Հաչիմն աբաղուլթյամբ հանեց ուսովը դցած հրացանը և, նշանակ դնելով Ասաղի կուրծքը, գոչեց.

— Անչա'րժ կաց:

Նրա որինակին հետևեցին «դումարազ» Հասանը, իննըմատանի Սեյֆուլլան, չեկ Հեյդարը, սև Բաղիրը, քոռ Միթալլիմը և միքանի ուրիշները: Յեւ Ասաղն յուր դեմ ու դեմ տեսավ տասնից ավելի սև խողովակներ, վորոնց մթին, մահաբեր ծակերը նայում էին սահուելի կերպով, ինչպես տարտարոսից վոնդված դեքերի աչքեր:

Ծերունի այդեպանը վազեց առաջ, սկսեց կատարած իմամլուցիներին խրատել, հաշտության հրավիրել, բացատրելով, միևնույն ժամանակ, թե տղամարդություն չե մեկի դեմ քան հոգով դուրս գալը:

Մեկը մի քար ձգեց նրա վրա և հայհոյելով ասաց, վոր չխառնվի դործին:

— Հեռո՛ւ, քեա՛րթառ շուն,— գոչեց չել նուրուլլան, — յեթե վոչ— հողիդ պատանայի բաժին կղարձնեմ:

Ծերունին հետ քաշվեց, ափսոսալով, վոր ձեռին հրացան չունե, յեթե վոչ ցույց կտար հանդուզն «յերեխաներին» թե ով է քեարլահի Աբուլլան:

Հաշիմը պահանջում էր, վոր Ասադն իր ձեռքով Ծաթմային խրճիթից դուրս բերի և հանձնի նրան: Ասադը սկզբում փորձեց աղդել նրա խելքի, սրտի և մյուսուլմանական զգացմունքների վրա: Նա հիշեցրեց կրոնի միությունն և Ղուրանի պատգամները, վոր արգելում են ուղղափառին՝ ուղղափառի արյուն թափել: Բայց Հաշիմը վոչինչ չէր ուզում լսել: Նա մի բերան պահանջում էր, վոր Ասադը կամայ վերադարձնի նրա քրոջը:

— Իսկ յեթե չտա՞մ,— գոչեց Ասադը, վերջապես, հուսահատված:

— Դիակդ վոտնատակ անելով կանցնեմ և

կվերցնեմ,— պատասխանեց Հաշիմը վճռողաբար:

Այս ասելիս հրացանը նրա ձեռին դողաց:

Աղքեսպանը հորդորում էր Ասադին խնայել յուր յերիտասարդ կյանքն և Ծաթմային կամով հանձնել յեղբորը: Ասադը չէր լսում նրան: Ճակատը թաշկինակով փաթաթած, յեջան արյունի չորացած կաթիլներով, կուրծքը կիսով չափ բաց, մի ձեռը հրացանին կռթնած, մյուսը կողքին հենած, մեջքը խրճիթի դռներին թեքած, նա կանգնած էր միևնույն տեղ և, կարծես, սպասում էր վերջին վճռական ընդեյին: Նրա աչքերը կարմրած էյին, գլուխը ծանրացել էր, վոտներն ու ձեռները դողում էյին սաստիկ տաքությունից:

— Եյ անխիղճ, խնայի՛ր ինքդ քեզ, ափսոս է քո յերիտասարդությունը,— գոչեց լմամուլեցիներից մեկը, վոր, ալկամ հիացած հանդուզն սարի—թորիաղցու առնական գեղեցկությունից, չկարողացալ զսպել յուր ներքին ձայնը:

— Նրա ի՞նչն է ափսոսալի, աղա՛, լեցրո՛ւ

Մեկը մի քար ձգեց նրա վրա և հայհոյելով ասաց, վոր չխառնվի դործին:

— Հեռո՛ւ, քեաթթառ չուն, — գոչեց չիկ ուրուլլան, — յեթե վոչ — հողիդ պատանայի բաժին կդարձնեմ:

Ծերունին հետ քաշվեց, ախոսարով, վոր ձեռին հրացան չունե, յեթե վոչ ցույց կտար հանդուզն «յերեխաներին» թե ով է քեաբլահի Աբդուլլան:

Հաշիմը պահանջում էր, վոր Ասաղն իր ձեռքով Ծաթմային խրճիթից դուրս բերի և հանձնի նրան: Ասաղը սկզբում փորձեց աղդել նրա խելքի, սրտի և մյուսուլմանական գլացմունքների վրա: Նա հիշեցրեց կրոնի միությունն և Ղուրանի պատգամները, վոր արգելում են ուղղափառին՝ ուղղափառի արյուն թափել: Բայց Հաշիմը վոչինչ չէր ուզում լսել: Նա մի բերան պահանջում էր, վոր Ասաղը կամայ վերադարձնի նրա քրոջը:

— Իսկ յեթե չտա՞մ, — գոչեց Ասաղը, վերջապես, հուսահատված:

— Դիակդ վոտնատակ անելով կանցնեմ և

կվերցնեմ, — սլաոստխանեց Հաշիմը վճռողաբար:

Այս ասելիս հրացանը նրա ձեռին դողաց:

Այդպեպանը հորդորում էր Ասաղին խնայել յուր յերիտասարդ կյանքն և Ծաթմային կամով հանձնել յեղբորը: Ասաղը չէր լսում նրան: Ճակատը թաշկինակով փաթաթած, յեջեան արյունի չորացած կաթիլներով, կուրծքը կխով չափ բաց, մի ձեռը հրացանին կռթնած, մյուսը կողքին հենած, մեջքը խրճիթի գունդին թեքած, նա կանգնած էր միևնույն տեղ և, զարձեա, սպասում էր վերջին վճռական բուրջին: Նրա աչքերը կարմրած ելին, գլուխը ծանրացել էր, վոտներն ու ձեռները դողում էին սաստիկ տաքությունից:

— Եյ անխիղճ, խնայի՛ր ինքդ քեզ, ախոսս ե քո յերիտասարդությունը, — գոչեց իմամ լուցիներից մեկը, վոր, ալկամա հիացած հանդուզն սարի-թորփաղցու առնական գեղեցկությունից, չկարողացավ դսպել յուր ներքին ձայնը:

— Նրա ի՞նչն է ախոսալի, աղա՛, լեցրո՛ւ

չան բերանը ծխով, — ընդհատեց նրա խոսքը մի խոսքոտ ձայն:

Իսկույն իննըմատնանի Սեյֆուլլայի հրացանը պայթեց: Գնդակը, դռների ճեղքից փչող աչնանային քամու պես, վզըլով անցավ Ասադի գլխի վրայով և մտավ խրճիթի հետևի թթենիններից մեկի բունի մեջ: Իմամուլուցին դրանով կամենում էր համառ սարի—թորփաղցուն վախեցնել: Սակայն, իզո՛ւր. Ասադը պատրաստվել էր պաշտպանվել մինչև վերջին շունչը:



Հրացանի ձայնը Փաթմային դարթեցրեց: Դռներն ուժով բացվեցին, յերիտատարդ աղջիկը դուրս վաղեց, խիտ ու յերկայն մազերն ուսերի վրա անկանոն թափված, կուրծքն յեղունգներով անխնա սրտուտելով և բարձրաձայն զոռալով: Նա վաղեց և կանդնեց Ասադի առջև, յերեսը դեպի իմամուլուցիները:

— Զո՛ւււ, — հրամայեց Հաչիմն յուր ընկերակիցներին հրացանը ցած դնելով:

— Կոտորվե՛ք, դուք, կոտորվե՛ք դուք, — ազադակում էր Փաթման, արդեն մոռացած յուր սովորական ամոթխածությունը:

— Վաղի՛ր այս կողմը, — դռնեց Հաչիմն, առաջ դիմելով, վոր քրոջը առևանդե:

Բայց Փաթման, ամելի մոտեցալ Ասադին, պաշտպանելու մտքով, կանդնեց նրա առջև և պատասխանեց յեղբորը.

— Մի՛ մոտենար, մի՛ մոտենար, յես չեմ թողնիլ, վոր նրա մի մտցն ել վնասլի: Նա մեղավոր չէ, յես ինքս եմ փախել նրա հետ, այո, յես ինքս իմ կամքով: Հաչիմ, մի՛ մոտենար, յես չեմ թողնիլ, չեմ թողնիլ...

Տեսարանը սրտաշարժ էր: Յերկու թշնամիների մեջտեղ կանդնած էր մի անհաղթելի պատնեշ, առանց վորին խորտակելու, անկարելի յեր վորևե ճակատամարտ:

Յերբեք Հաչիմը չէր կարող յերևակայել, թե Փաթման այդչափ պաշտպան կհանդիսանա յուր առևանդողին: Նա հավատացած էր, վոր յուր քույրն ակամա յե ընկել Ասադի ճեռքը, թե նա մի տկար զոհ և, վորին փրկելու

համար պիտի թշնամու արյունը խմել: Այժմ, տեսնելով Յաթմայի համառությունը, տեսնելով նրա հուսահատ պաշտպանությունը, մնաց սուլած: Մի վայրկյանում վրեժխնդրության կիրքը նրա սրտում տեղի տվեց ահամախոլահարության: Նա, վոր մի րոպե առաջ պատրաստ էր ամենայն ստոնությամբ մահաբեր դնդակն ուղղել հանդուգն առևանգողի կրծքին, այժմ յերեսը յեա դարձրած, յերկմտության մեջ լուռ նայում էր յուր ընկերակիցները յերեսին:

Ինքը, դո՛հ համարվածը ներում է հանցավորին, և հանցավորն աշնքան վեհանձն է, աշնքան անվեհեր, վոր պատրաստ է մինչև վերջին շունչ պաշտպանել իր փախցրած աղջըկան: Ուրեմն ամարդություն չի՞ լինիլ, արդյոք, ձեռք բարձրացնել մի այդպիսի յերիտասարդի վրա և սպանել նրան յուր սիրեցյալի աչքի առջև: Այս էր արտահայտում Հաչիմի դեմքը: Յեւ լուռ ակնարկություններ հասկացող շիրվանցիներն, իսկույն գուռակե-

լով նրա միտքը, մտիկ արեցին միմյանց յերեսին:

Շիլ Նուրուլլան առաջինը վստահացավ հայտնել ամբոխի լուռ վճիռը: Նա բարձրաձայն արտասանեց.

— Հաչիմ, նամուզ մի՛ մոռանար:

Իմամուցիները մեջ բարձրացավ մի խուլ աղմուկ: Նրանք վրդովված էյին Հաչիմի մեղմանալուց: Ի՞նչպես կարելի յե ներել մի հանդուգն թշնամու, մի մարդու, վոր անպատվել և ամբողջ Իմամուլի անունը, փախցնելով թաղի ամենազեղեցիկ աղջիկներեց մեկին: Ի՞նչ կասեն իմամուցիները, ի՞նչ կասեն ուրիշ թաղեցիները:—Վո՛չ, վո՛չ, յերբեք չի կարելի դորձը հաչտությամբ վերջացնել: Մի՞թե այս նպատակով են իմամուցիները յերեկ ամբողջ ուրը կռվել, միթե՞ դրա համար են քսան մարդ ամբողջ դիչերն անքուն թափառել քաղաքի շրջակայքում: Պետք է թշնամուն պատժել, պետք է վրեժ հանել, առանց արյունի անկարելի յե Իմամուլի պատիվը վերականգնել:

— Արյո՛ւն, արյո՛ւն, — գոռացին բոլոր կիտաւայրենիները միարեւրան:

Հաշիմը հասկացաւ այդ կատաղի ամբոխի տրամադրությունը: Նա զզաց, վոր յեթե Ասաղին ինքը ների, մյուսները չեն ներիլ, չեն ներիլ դուցե և իրան: Բայց ինչպե՞ս հեռացնի Ասաղից Յաթմային, վոր միանգամայն կպել է նրան անբաժան, այնպե՞ս վոր թշնամուն ուղղած ամեն մի հարված նախ կարող է նրան հասնել:

Մինչ նա այս բոպեյակն տատանման մեջ էր, իմամը ցիններէ յերեք հոգի աննկատելի կերպով բաժանվեցին խմբից և, ծռոտել տակ թաղնվելով, շրջան տալով, յետևի կողմից մոտեցան Ասաղին:

Այդ նկատեց այդեպանն և, յուր ժանդոտած խանչալը հանելով, կանգնեց Ասաղի յետևում, վճռելով պաշտպանել նրան յուր կյանքի գնով:

Այն ինչ՝ Ասաղն աշխատում էր ասպարեղից անվնաս հեռացնել Յաթմային, վոր ինքը միտախակ կովի թշնամիների հետ:

Մերունու և յերեք իմամը ցիններէ մեջ կռիւլ բացվեց: Ասաղն յերեսը յեա դարձրեց և իսկույն հրացանն արձակեց: Լավեց մի արաբական հիշոց, և Հաջի-Մլխաբպարի սև խափշիկներից մեկը, աջ ձեռով ծունկը բռնած, գոռալով նստեց գետնի վրա: Ասաղն արձակեց յերկրորդ անգամ, բայց — անողուտ:

Նույն վայրկյանին նա յուր մեջքի վրա զզաց մի սաստիկ սանունթյուն, վոր թափանցեց ներս: Նա ամբողջ մարմնով դողաց, ահամա գոռաց և ընկաւ ուղիղ Յաթմայի վտոնելի տակ:

— Ալլա՛հ, ալլա՛հ, — լավեց նրա խուլ ձայնը, և նրա աչքերի բերբերը, տարորինակ կերպով պտտելով շրջանակների մեջ, դարձան Յաթմայի վրա:

Այդքանը միայն կարողացաւ լսել և տեսնել խեղճ աղջիկը, ուրիշ՝ Ասաղը վոչինչ չասաց և վոչ մի շարժումն չարավ:

Յերբ իմամը ցինները, վայրենի կերպով գոռալով, առաջ վաղեցին, վոր իրանց վրիժա-

ոության արդյունքը մոտիկից տեսնեն, յերբ
Հաշիմը մոտեցավ յուր քրոջը վերցնելու,
Ֆաթման ընկած էր Ասադի վրա և դառն վոդ-
բուժ էր...

Թիֆլիս, 1889 թ.

Տեխ. խմբ. Տ. Խաչվանքյան
Սրբազրիչներ՝ Հ. Դուրախանյան,
Հ. Մանուկյան

Գրավի. լիազոր Կ—4602, պատվեր 887,
հրատարակչ. 4143, տիրաժ 5000,

Պետհրատի տպարան, Յերևան, 1հնի 65

ուսթյան արդյունքը մոտիկից տեսնեն, յերբ
Հաշիմը մոտեցավ յուր քրոջը վերցնելու,
Ֆաթման ընկած եր Ասադի վրա և դառն վոզ-
բուժ եր...

Թիֆլիս, 1889 թ.

Տեխ. խմբ. Տ. Սաչվանքյան
Սրբազրիչներ՝ Հ. Դուլուխանյան,
Հ. Մանուկյան

Գլավլ. լիպրո Կ—4602, պատվեր 887,
հրատարակչ. 4143, տիրաժ 5000,

Պետհրատի տպարան, Յերևան, 1651/65

« Ազգային գրադարան



NL0351703

1. ар 80 б.

52

48387

Ширванзаде
Через 15 лет
Фатьма и Асад

Гиз Арм. ССР. Ереван 1937 г.